

ԱՆԴՐԱՆԻԿ սարկավազ ՏՈՆՈՅԱՆ

«ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ»

Ներածություն

Հայ ժողովուրդը XI դարի վերջերին նոր պետականություն կերտեց հեռավոր Կիլիկիայում, որի պատմության էջերը լի են քաղաքական վերելքներով ու վայրէջքներով: Այդ պետության հետ հաշվի էին նստում ժամանակի մեծ ու փոքր պետությունները՝ Բյուզանդական կայսրությունը, Իկոնիայի սուլթանությունը, Մոնղոլական տերությունը, Եգիպտոսի սուլթանությունը, Վենետիկը, Ջենովան և այլն: Կիլիկիայի հայկական պետության հետ կնքվել են առևտրական պայմանագրեր, դաշնագրեր, եղել են դիվանագիտական առաքելություններ:

Մեր առջև նպատակ ենք դրել ներկայացնել Կիլիկիայի հայկական պետության XI-XIV դարերն ընկած ժամանակաշրջանի պետական կարգը: Սույն խնդրի վերաբերյալ ուսումնասիրությունները սակավ են և մեր ավարտական աշխատանքը գրելիս փորձել ենք այդ երկասիրությունները քննել, հեղինակների կողմից բաց թողածը հնարավորինս լրացնել: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Կիլիկիայի պետության պետական կարգի վերաբերյալ հայերեն առաջին ուսումնասիրությունը կատարել է Ղևոնդ Ալիշանը¹: Սակայն, մեր կարծիքով, առաջինը լինելով հանդերձ՝ այն գերծ չէ բացթողումներից:

Կիլիկիայի պետական կարգին անդրադարձել է նաև Գ. Միքայելյանը², նշենք նաև, որ հեղինակի մոտեցումը տվյալ խնդրին հպանցիկ է և ամբողջական պատկերացում կազմել կիլիկյան պետական համակարգի մասին հնարավոր չէ:

Սույն խնդրի վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություն է գրել Ա. Սուքիասյանը³, սակայն հեղինակն առավել հանգամանալից ներկայացում է Կիլիկիայի դատական համակարգը, բայց արքունի պաշտոններին ու գործակալություններին ևս թռուցիկ է անդրադառնում:

¹ Ղևոնդ Ալիշան, «Միսուն» Վենետիկ, 1885 (այսուհետ՝ Միսուն):

² Գ. Микаелян, История Киликийского Армянского государства, Ереван, 1952.

³ Ա. Սուքիասյան, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, Երևան, 1978:

Ս. Բոռնագյանի ուսումնասիրության մեջ առավել հանգամանալից են քննարկվում Կիլիկիայի գործակալությունները, պետական պաշտոնները, սակայն նրանում նույնպես նկատելի են վրիպումներ, որոնց ի տեղի անդրադարձել ենք⁴:

Այնուամենայնիվ, նշենք, որ վերոնշյալ հեղինակների ուսումնասիրությունները մեծապես օգնել են մեզ սույն ավարտական աշխատանքը գրելիս:

Եվրոպական երկրների և Կիլիկյան Հայաստանի Ֆեոդալական հարաբերությունները ուսումնասիրելու համար օգտվել ենք Հ. Մանանդյանի «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում»⁵, նաև Ժ. Դյուբու «Միջին դարերը» աշխատասիրություններից⁶:

Օգտվել ենք նաև այլ ուսումնասիրություններից, որոնց կանդրադառնանք ի տեղի:

Ավարտաճառի համար հիմնական սկզբնաղբյուր է հանդիսացել Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը»⁷: Այդ աշխատանքը վերլուծելիս ինչ-ինչ չափով պատկերացում ենք կազմել կիլիկյան դատարանների, կատարած դատավճիռների, տուգանքների, մահապատիժների մասին: Կիլիկիայի դատական համակարգի օրենքներից բացի՝ այն մեծ քանակությամբ տեղեկություններ է պարունակում արքունի պաշտոնների անվանման, նրանց պարտականությունների վերաբերյալ՝ սկսած ֆեոդալական նվիրապետության ամենաբարձր աստիճանից՝ թագավորից, մինչև այդ սանդուղքի ամենացածր աստիճանը: Հեղինակի աշխատանքում սակավ տվյալներ կան նաև Կիլիկիայի ինքնակառավարման մարմինների մասին:

⁴ Ս, Բոռնագյան, Սոցիալ տնտեսական հարաբերությունները Կիլիկիայի հայկական պետությունում 11-12 դդ., Երևան, 1973:

⁵ Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Երևան, 1954:

⁶ Ж. Дюби, Средние века (987-1460), от Гуго Капета до Жанны д'Арк, Москва, 2001.

⁷ Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը», աշխատասիրությամբ Արսեն Վարդապետ Ղլտճեանի, Էջմիածին, 1918:

Աշխատանքը գրելիս օգտվել ենք նաև Սմբատ Սպարապետի «Տարեգրքից»⁸, որը ոչ միայն կարևոր աղբյուր է Կիլիկիայի պետության պատմության վերաբերյալ, այլ պետական քաղաքական և օտար պետությունների հետ դիվանագիտական հարաբերությունները լուսաբանելու համար: Մեր աշխատանքի հետ «Տարեգիրքն» առնչվում է նաև կիլիկյան պետական բանակի պաշտոնների, նրանց կատարած դերի, զինվորների սպառազինության հարցում: Կիլիկիայի բանակի մասին տվյալներ քաղելու համար օգտվել ենք նաև Ներսես Լամբրոնացու «Զինվորաց օրենսգրքից»⁹:

Մեր ավարտական աշխատանքի համար կարևոր նշանակություն ունի նաև, հատկապես, սենյորի և վասալի իրավական, քրեական, տնտեսական, սահմանային հարաբերությունները ուսումնասիրելու համար Սմբատ Սպարապետի թարգմանած «Անտիոքի Ասիզները» աշխատանքը¹⁰:

Սույն աշխատանքում կարևոր տեղ է գրավում Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը»¹¹, որովհետև սույն իրավական երկը, նախքան Սմբատ Սպարապետը կգրեր իր աշխատանքը, լայնորեն կիրառվել է Կիլիկիայի դատական համակարգում, հետևաբար, փորձել ենք որոշ հարցերում զուգահեռներ անցկացնել Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» հետ:

Մեր աշխատանքում կարևոր տեղ է գրավում նաև Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմություն» երկասիրությունը, այն սույն աշխատանքին առնչվում է նրանով, որ հեղինակը միակ պատմիչն է, ով խոսում է Կիլիկյան ռազմական նավերի գոյության մասին: Նշենք նաև, որ կիլիկյան ռազմական նավերի գոյության մասին Կիլիկիայի պետական կարգը ուսումնասիրողները չեն անդրադարձել, և այդ խնդրի մասին գաղափար կազմելու համար մեզ ուղեցույց է ծառայել Ա.

⁸ Սմբատ Սպարապետի Տարեգիրք, ի Վենետիկ, Ս. Ղազար, 1956, Տարեգիրք արարեալ Սմբատ Սպարապետի Հայոց որդոյ Կոստանդեայ կոմսին Կոռիկոսոյ, Փարզ, 1859:

⁹ Ա. Բոզոյան, Ներսես Լամբրոնացու «Զինվորաց օրենսգրքի» համեմատական բնագիր, անտիպ:

¹⁰ Поповян А., Ассизы Антиохийские, «Բանբեր մատենադարանի», Երևան, 1956.

¹¹ Մխիթար Գոշ, «Դատաստանագիրքը Հայոց», աշխատասիրությամբ Վահան ծ. Վարդապետ Բաստամյանցի, ի Վաղարշապատ, 1880:

Տիրացյանի «Կիլիկիայի հայկական պետության սեփական նավատորմիդ ունենալու հարցի շուրջը» հոդվածը¹²:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև «Պատմութիւն վարուց Ներսիսի եպիսկոպոսի երգոցս սաղմոսիս քննօղի» երկը՝ հրատարակությամբ Արշակ Տեր-Միքելյանի¹³: Սույն աշխատանքը կարևոր է նրանով, որ այն պարունակում է կարևոր տեղեկություններ XI-XII դարերի հայ և բյուզանդական իշխանների տիտղոսների մասին:

Օժանդակ սկզբնաղբյուր է նաև անհայտ հեղինակի «Պատմութիւն ազգին Ռովբինանց թե որպես տիրեցին Կիլիկիոյ» աշխատանքը¹⁴: Այս աշխատանքը կարևոր տեղեկություններ է հաղորդում «պայլ» գործակալության վերաբերյալ:

Մեր աշխատանքը գրելիս օգտվել ենք նաև «Լևոն Բ թագավորի Ջենովացիներին ուղղված պարզևագրից»¹⁵, ինչպես նաև «Լևոն Ե թագավորի Սիցիլյացիներին ուղղված պարզևագրից»¹⁶, որոնք կարևոր տեղեկություններ են հաղորդում թագավորի՝ տնտեսական հարցերում իշխանություն ունենալու և «Ամենայն Հայոց թագավոր», «Հայոց թագավոր» ձևերով ստորագրելու, ինչպես նաև քաղաքային «Բուրջեսների» լիազորությունների մասին: Ասպետ և ձիավոր Բառերի նույնության համար հիմնավոր վկայություն է հաղորդում «Կոստանդին իշխանի դաշնագիրը»¹⁷:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, որոնք բաժանված են ենթագլուխների և վերջաբանից:

¹² Ա. Տիրացյան, Կիլիկիայի հայկական պետության սեփական նավատորմիդ ունենալու հարցի շուրջը, «Էջմիածին» N 2, 1957:

¹³ Մամուել քահանայի Անեցոյ, «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», աշխատասիրությամբ Արշակ Տեր-Միքելյանի, Վաղարշապատ, 1988, էջ 224-243 (այսուհետ՝ Մամուել Անեցի):

¹⁴ Նույն տեղում, էջ 204-223:

¹⁵ Միսուան, էջ 388-389:

¹⁶ Նույն տեղում, էջ 364:

¹⁷ Նույն տեղում, էջ 210-211:

Մինչ պետական կարգին անդրադառնալը՝ առաջին գլխում համառոտ անդրադարձել ենք Կիլիկիայի քաղաքական պատմությանը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև Կիլիկիայի հայկական պետության անկումը:

Երկրորդ գլխում ներկայացրել ենք Կիլիկիայի հայկական պետության պետական կարգը իշխանական և թագավորական շրջաններում: Այդ երկու շրջանների ուսումնասիրությունը կատարել ենք առանձին, որովհետև, դրանք տարբեր պետական ինստիտուտներ են, սակայն թագավորականը գալիս և լրացնում է իշխանական համակարգին, կամ այլ կերպ ասած՝ թագավորական շրջանն իշխանական շրջանի տրամաբանական շարունակությունն է:

Երրորդ գլուխը նվիրել ենք գործակալությունների, արքունի պաշտոնների, ինքնակառավարման մարմինների, բանակի, դատական համակարգի ուսումնասիրությանը:

Աշխատանքի վերջում ներկայացրել ենք եզրակացություն:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Կիլիկիան սկզբից մինչև XI դար

Հնագույն ժամանակներից սկսած՝ Կիլիկիայի պատմությունը կապված է Առաջավոր Ասիայի երկրների, այդ թվում՝ Մեծ Հայքի, ինչպես նաև Եգիպտոսի, Հունաստանի, Հռոմի պատմության հետ:

Պետությունը, որն ստեղծվել էր X դարի վերջին հայերի կողմից, Փոքր Հայքի հարևանությամբ, միջնադարի լատին ժամանակագիրներն անվանում էին Փոքր Հայաստան, երբեմն՝ պարզապես Հայաստան (*Armenia minor, Armenia, Ermenie*): Կիլիկիայի հայկական պետության ժամանակաշրջանի հայերեն աղբյուրներում Կիլիկիան անվանվում է «Աշխարհ» կամ «Տուն», «Կիլիկյան աշխարհ» կամ «Հայոց աշխարհ»: Արաբների օրինակով Կիլիկիան անվանվել է «Սսի աշխարհ», «Սիսուան»¹⁸:

Կիլիկիայի պետությունն արևմուտքում սահմանակից էր Պոփյուլիային, Իսավրիային, Պիսիդիային, հյուսիսում՝ Լիկոնիային և Կապադովկիային, արևելքում՝ Կատանիային և Կոմմագենեին, իսկ հարավ-արևելքում՝ Սիրիային¹⁹: Աշխարհագրորեն Կիլիկիան բաժանված էր հետևյալ մասերի՝ երկրի արևմտյան շրջանը, որը քարոտ մանր բլուրների շրջան էր, կոչվում էր Քարոտ Կիլիկիա (*Cilicia Trachera*), արևելյան արգավանդ դաշտերով շրջանը՝ Դաշտային Կիլիկիա (*Cilicia Pedias*), իսկ հյուսիս-արևելյան լեռնային շրջանը՝ Լեռնային Կիլիկիա (*Cilicia Montagne*)²⁰:

Կիլիկիան երեք կողմերից շրջապատված էր լեռնաշղթաներով, իսկ հարավից՝ Միջերկրական ծովով, որի ափը ձգվում էր մոտավորապես 500 կմ

¹⁸ Г. Микаелян, ст 6.

¹⁹ Նույն տեղում, էջ 7:

²⁰ Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ Գիտ. Ակադ. հրատ., հատ. III, Երևան, 1976, էջ 671 (այսուհետ՝ Հայ ժող. պատմություն):

երկարությամբ: Առավելագույն բարձրությունը 3500 մ էր, երկրի հարավ արևելքում Ամանոսյան լեռնաշղթան (1800-2000 մ) էր, իսկ արևմուտքում, հյուսիսում և արևելքում՝ հաջորդաբար ընկած էին Կիլիկյան Տավրոսի, Անտիտավրոսի և Ամանոսի լեռնաշղթաները²¹:

Կիլիկիայի բնակչությունը միջին դարերում հիմնականում բաղկացած էր հայերից, ասորիներից, հույներից, հրեաներից, արաբներից²²:

XII դարում՝ Կիլիկիայի հայկական պետության ծաղկման շրջանում, երկիրն ընդգրկում էր շուրջ 40 հազ. քառ. կմ տարածք, իսկ բնակչությունը՝ 1 մլն: Խոշոր քաղաքներն էին Անարզաբան, Մամեստիան, Սիսը, Ադանան, Տարսոնը: Կիլիկիան XIV դարում ուներ 25 նավահանգիստ, որոնցից խոշորներն էին Այասը, Կոռիկոսը, Մեգաբոսը, Սելինոսը, Մերսին, Ալեքսանդրեկը, իսկ ամրոցների և բերդերի թիվը հասնում էր 100-ի²³:

Կիլիկիայի բնիկների ծագման և երկրի անվանման մասին գոյություն ունեն տարբեր ենթադրություններ²⁴:

Ն. Ք. IX դարում Կիլիկիան Ասորեստանի տիրապետության տակ էր, սակայն VII դ. վերջինիս թագավորության կործանումով այն անկախացավ:

Բայց իր աշխարհագրական դիրքի պատճառով երկիրը չէր կարող դուրս մնալ միջազգային քաղաքականության ասպարեզից, և դարերով այն հզոր տիրակալների իշխանության տակ էր: IV դ. Կիլիկիան պարսիկներից անցավ մակեդոնացիների տիրապետության տակ²⁵:

Ալեքսանդր Մակեդոնացուց հետո Կիլիկիան մնաց Սելևկյաններին, որոնք երկրում հաստատեցին հունականություն²⁶:

²¹ Г.Микаелян, ст. 5.

²² Նույն տեղում, էջ 14-17:

²³ Նույն տեղում, էջ 20:

²⁴ Կ. Մուրաֆյան, էջ 31-98:

²⁵ Г. Микаелян, ст, 28:

²⁶ Նույն տեղում, էջ 29:

Ն. Ք. II դ. սկզբին Կիլիկիան անցավ հռոմեացիների տիրապետության տակ: Հռոմի դեմ դուրս եկավ Միհրդատ Պոնտացին, և նրա դաշնակից Տիգրան Բ Մեծ Արտաշեսյանը ն. Ք. 83 թ. նվաճեց Կիլիկիան: Նա երկիրն իր իշխանության տակ պահեց ընդամենը 14 տարի, որը հռոմեացի զորավար Պոմպեոսի կողմից կրկին նվաճվեց: Պոմպեոսն այն դարձրեց հռոմեական պրովինցիա, սակայն կիլիկեցիներին թույլատրվեց ունենալ իրենց տեղական մանր թագավորները: Սակայն I դ. հռոմեացիներն այն դարձրեցին իրենց կայսրության պրովինցիաներից մեկը²⁷:

IV դ. Կիլիկիան բաժանվեց 3 պրովինցիաների իրենց մայրաքաղաքներով: Այդ քաղաքներն ազատ էին համարվում, որոնց թույլատրվում էր ունենալ իրենց զորքը: IV դարում Կիլիկիայում կային արդեն 18 ազատ քաղաքներ:

395 թ. Հռոմեական կայսրության բաժանումից հետո Կիլիկիան մտավ Բյուզանդական կայսրության տիրապետության տակ: Այն նրա կազմի մեջ մնաց մինչև արաբների 648 թ. արշավանքը²⁸:

Արաբ կառավարիչ Մուավիան (661-680) տիրեց ոչ միայն Կիլիկիային, այլ 5 տարի պաշարեց Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը, սակայն տիրել այն չկարողացավ: Բյուզանդական կայսրերը շուրջ 200 տարի ապարդյուն ցանկականում էին ետ նվաճել Կիլիկիային, բայց արաբներ երկիրն իրենց տիրապետության տակ պահեցին մինչև X դարի կեսերը, երբ Նիկիփոր Փոկասը նվաճեց կիլիկյան մի շարք քաղաքներ: Բյուզանդացիները Կիլիկիան իրենց ձեռքում պահեցին շուրջ 120 տարի, որից հետո սելջուկ թուրքերը ցանկացան տիրել երկրին, բայց տեղի հայ իշխանները պայքար սկսեցին ինչպես սելջուկ հրոսակների, այնպես էլ Բյուզանդական կայսրության զորքերի դեմ:

²⁷ Г. Микаелян, ст 31-33:

²⁸ Ս. Տեր-Ներսիսյան, Կիլիկյան Հայաստանի թագավորությունը, Լ. Տեր-Պետրոսյանի «Խաչակիրները և Հայերը» գրքում, հատ. Ա, Երևան, 2005, էջ 381 (այսուհետ՝ Խաչակիրները և Հայերը):

Կիլիկիայի հայկական պետությունը

1045 թ. Բագրատունյաց թագավորության անկումից հետո հայ ժողովուրդը պետականություն կերտեց հեռավոր Կիլիկիայում: Նրանք Կիլիկիայում բնակություն էին հաստատել դեռևս հնագույն ժամանակներից ի վեր: Հայերի թիվն ստվարացավ, երբ Բյուզանդական կայսրությունը տիրեց հայկական որոշ տարածքներին: Կայսրությունը հայ ընտանիքներ գաղթեցրեց Կիլիկիա և հարակից փոքրասիական շրջաններ: XI դարում հայերի թիվը Կիլիկիայում գերազանցում էր տեղացի հույներին, ասորիներին, հրեաներին:

Իրենց արևելյան սահմանների պաշտպանությունն ապահովելու նպատակով՝ բյուզանդական կայսրերը որոշ հայ իշխանների նշանակել էին կարևոր քաղաքների կառավարիչներ²⁹: Նրանց շնորհիվ հայ բնակչությունը համախմբվեց հայ իշխանական տների շուրջը և հետո պայքար սկսեց թե՛ բյուզանդացիների և թե՛ սելջուկ թուրքերի դեմ: Քաղաքական առումով հայերի համար նպաստավոր էր 1071 թ. Մանազկերտի ճակատամարտը, որն ավարտվեց բյուզանդական բանակի ծանր պարտությամբ և կայսեր գերությամբ: Մանազկերտի պարտությամբ կայսրության դիրքերը երերուն դարձան:

Մանազկերտի ճակատամարտից հետո բյուզանդացիների մոտ ծառայող հայազգի զորավար Փիլարտոս Վարաժնունին հրաժարվեց ճանաչել Բյուզանդիայի գերիշխանությունը և ստեղծեց իր իշխանությունը Մարաշ կենտրոնով: Այդ իշխանությունը երկար կյանք չունեցավ: Այն 1086 թ. կործանեցին սելջուկ թուրքերը: Փիլարտոսի մահից հետո հայ իշխանները համախմբվեցին մեկ ուրիշ հայ իշխանի՝ Գող Վասիլի շուրջը, նրա իշխանության կենտրոնը Քեսուն

²⁹ Խաչակիրները և Հայերը, էջ 381:

քաղաքն էր: Գող Վասիլի մահից (+1112) հետո նրա իշխանությունը կործանվեց 1115 թ.³⁰:

Միակ կենսունակը Ռուբեն Ա-ի (1080-1095) իշխանությունն էր, որն էլ վերջինիս անունով անվանվեց Ռուբինյան: Ռուբենը, 1080 թ. տիրանալով Լեռնային Կիլիկիայի Կոռոմոզով, Կոպիտատ և Բարձրբերդ ամրոցներին, ապստամբեց Բյուզանդիայի դեմ՝ ստեղծելով զորեղ պետություն, որը գոյատևեց մոտ 3 դար:

Ռուբեն Ա-ին հաջորդեց նրա որդին՝ Կոստանդին Ա-ը (1095-1100): Նա 1098 թ. գրավեց Վահկա բերդը և այն դարձրեց իշխանության կենտրոնը:

XI դարի վերջերին սկսված խաչակրաց արշավանքները թուլացրեցին սելջուկ թուրքերի ուժերը: Օգտվելով դրանից հայ իշխանները դյուրությամբ նրանցից ետ իլեցին նվաճված տարածքները:

Թորոս Ա-ն (1100-1129) 1104 թ. բյուզանդացիներից մաքրեց Միս և Անարգաքա քաղաքները և ամրապնդվեց դաշտային Կիլիկիայում: Դաշտային Կիլիկիայի համար մղվող պայքարը սրվեց Լևոն Ա-ի (1129-1137) օրոք:

Բյուզանդական կայսր Հովհաննես Կոմենենոսը, հայերի հաջողություններից անհանգստացած, 1137 թ. արշավեց Կիլիկիա: Նա գրավեց Դաշտային և Լեռնային Կիլիկիայի քաղաքները և գերեց Լևոն Ա-ին ու նրա 2 որդիներին³¹:

Իշխանության ժամանակավոր կորուստը ստեղծեց մի քանի տարի: Կիլիկիայի հայկական ուժերը զենքերը ցած չդրեցին և պայքարը շարունակեցին: Այդ պայքարը մեծ թափ ստացավ, երբ հայերին միացավ գերությունից փախած Լևոն Ա-ի որդի Թորոս Բ-ը (1145-1169): Թորոսին միացան նաև գերությունից փախած մյուս եղբայրները՝ Ստեփանեն և Մլեհը: Համառ կռիվներից հետո նրանց հաջողվեց բյուզանդացիներից մաքրել Դաշտային Կիլիկիան³²:

³⁰ Խաչակիրները և հայերը, էջ 384, Կ. Մութաֆյան, էջ 363:

³¹ Г. Микаелян, ст. 98, История Византий, Т 2, Москва, 1967, ст 321.

³² Г. Микаелян, ст. 110, История Византий, ст 321.

Թորոսին հաջորդեց Մլեհը (1169-1175), որը չկարողացավ հասնել իր ծրագրերի իրականացմանը: Մլեհը 1175 թ. դավադրությամբ սպանվեց:

Հայ իշխանները նրա հաջորդ ընտրեցին Ռուբեն Բ-ին (1175-1187), որն Ստեփաննեի ավագ որդին էր³³:

1187 թ. Եգիպտոսի սուլթանը, պարտության մատնելով խաչակիրներին, գրավեց Երուսաղեմը: Քաղաքական այդ բարդ ժամանակաշրջանում Կիլիկիայի իշխանության ղեկավարությունն ստանձնեց ականավոր քաղաքական գործիչ, Լևոն Բ-ը (1187-1219): Լևոնը թագավորական թագ ստանալու համար բանակցություններ սկսեց Հռոմեական սրբազան կայսրության (Գերմանիայի) Կելեստինոս Գ (հետագայում՝ Հենրիխ Դ) տիրակալի և Հռոմի Իննոկենտիոս Գ պապի հետ³⁴: Լևոնին թագ ուղարկելու պատրաստակամություն հայտնեց նաև Բյուզանդական Ալեքսիոս Գ կայսրը³⁵:

1198 թ. հունվարի 6-ին՝ Սուրբ Ծննդյան օրը, Տարսնոն քաղաքում տեղի ունեցան Լևոն Բ-ի թագադրման արարողությունները, որոնց ներկա էին օտար պետություններից եկած իշխաններ, դեսպաններ, բարձրաստիճան հոգևորականներ, բազմահազար ժողովուրդ³⁶:

1203 թ. Լևոնը գրավեց Անտիոքը և գահ բարձրացրեց Ռուբեն-Ռայմոնդին, որը մոր կողմից Լևոնի եղբոր թոռն էր: Նրա օրոք Կիլիկիայի տիրապետության տակ մտավ Ալեքսանդրեոսից մինչև Սելևկիա ընկած Միջերկրական ծովափը՝ դրանով դառնալով Մերձավոր Արևելքի ուժեղ պետություններից մեկը:

Լևոն Բ-ի մահից հետո գահը ժառանգեց նրա դուստրը՝ Զաբելը: Հանգամանքների բերումով գահը կենտրոնացավ Կոստանդին Գունդստարի ձեռքում, որն անչափահաս թագաժառանգի ինամակալն էր: Զաբելին ամուսնացրեց իր որդի Հեթումի հետ և նրան դարձրեց թագավոր՝ 1226 թ. հիմք

³³ Г. Микаелян, ст 126-130.

³⁴ Խաչակիրները և հայերը, էջ 398: Այս բանակցություններում Հռոմի պապը հանդես էր գալիս միջնորդի դերում:

³⁵ Նույն տեղում, էջ 399:

³⁶ Г. Микаелян, ст. 138-160, Հայ ժող. պատմություն, էջ 677:

դնելով Հեթումյան հարստությանը: Հեթումյաններն իրենց դիրքերն ամրապնդելու համար պետական կարևորագույն պաշտոններն ու գործակալությունները կենտրոնացրեցին իրենց ձեռքերում՝ Կոստանդին Գունդստաբլը դարձավ թագավորահայր և ավագ պարոն, Հեթումի ավագ եղբայր Սմբատը՝ սպարապետ, մյուս եղբայր Լևոնը՝ մարաջախտ, Օշինը՝ պայլ, Բարսեղը՝ Սսի արքեպիսկոպոս³⁷:

Հեթում թագավորը ներքին միավորիչ քաղաքականությունից հետո, արտաքին քաղաքականության գործերում դաշինք կնքեց մոնղոլների հետ: Այդ ժամանակաշրջանում մոնղոլները ներխուժեցին Մերձավոր Արևելք և սպառնացին Կիլիկիայի պետության գոյությանը: 1246 թ. Սմբատ Սպարապետը մեկնեց մոնղոլների մայրաքաղաք Կարակորում՝ նախապատրաստելու Հեթում Ա-ի այցելությունը Մոնղոլիա, իսկ 1254 թ. Հեթում արքան մեկնեց Մանգու խանի մոտ և նրա հետ դաշինք կնքեց³⁸:

Հայ-մոնղոլական դաշինքը սկզբում նպաստավոր էր հայերի համար, սակայն 1260 թ. մոնղոլական զորամասերը մամլուքների կողմից պարտվեցին, և Կիլիկիան դարձավ Եգիպտոսի սուլթանության հիմնական ախոյաններից մեկը: 1266 թ. մամլուքները ներխուժեցին Կիլիկիա և Մառի ճակատամարտում պարտության մատնեցին հայկական ուժերին: Սակայն 2 տարի անց հայերին հաջողվեց վրնդել թշնամուն³⁹:

Հեթում թագավորին հաջորդեց Լևոն Բ-ը (1270-1289), որը 1285 թ. հաշտություն կնքեց մամլուքների հետ:

XII դարի վերջերին Կիլիկիայի վիճակը աստիճանաբար վատացավ: Հայկական թագավորությունն իր հայացքը հառեց Արևմուտք՝ հուսալով Հռոմի

³⁷ Г. Микаелян, ст. 239, Խաչակիրները և հայերը, էջ 403:

³⁸ Նույն տեղում, էջ 305:

³⁹ Նույն տեղում, էջ 341:

պապի և եվրոպական երկրների օգնությանը, սակայն դրանք այդպես էլ չարդարացան⁴⁰:

Լևոնին հաջորդեց Հեթում Բ-ը (1289-1301), որը հրաժարվեց գահից հօգուտ Լևոն Դ-ի (1301-1307):

1305 թ. սկսած մամլուքները բազմիցս արշավանքներ կազմակերպեցին Կիլիկիա և մեծ հաջողությունների հասան⁴¹:

Լևոն Դ-ին հաջորդեց Օշինը (1307-1320): 1307 թ. Սսում գումարվեց ժողով, որտեղ համաձայնություն տրվեց պապի պահանջներին: Սակայն ժողովուրդն ու Եկեղեցին այդ որոշմանը դեմ կանգնեցին:

1309 թ. Ադանայի նոր ժողովում որոշվեց ընդունել 1307 թ. Սսի ժողովի որոշումները: Սույն ժողովների որոշումները ջլատեցին հայերի ուժերը, ինչը նպաստեց մամլուքների արշավանքների հաջողությանը⁴²:

1320 թ. մամլուքները գրավեցին Այաս նավահանգիստը: Լևոն Ե-ի օրոք (1320-1343) 1337 թ. նրանք հայերից վերջնականապես այդ նավահանգիստը և այլ բարեբեր հողեր խլեցին:

1343 թ. թագավորական գահն անցավ Գվիդոն Լուսինյանին, որը ֆրանսիական տոհմից էր: Սակայն 2 տարի անց հայկական գահին տիրեց Հեթումյանների ազգականներից Կոստանդինը (1344-1363)⁴³:

1360 թ. մինչև 1375 թ. Եգիպտոսի մամլուքները և թուրքմենական բանակներն ասպատակեցին Կիլիկիան: 1374 թ. Սիսը պաշարվեց թուրքմենական զորքերի կողմից, որոնց 1375 թ. միացան նաև Հալեպի ամիրայի զորքերը: Թշնամու գերակշիռ ուժերի ճնշման տակ ընկավ Սիսը, իսկ Լևոն Զ-ն ու իր ընտանիքը գերվեցին⁴⁴:

⁴⁰ Г. Микаелян, сг 309.

⁴¹ Նույն տեղում, էջ 435:

⁴² Նույն տեղում, էջ 436:

⁴³ Նույն տեղում, էջ 361:

⁴⁴ Նույն տեղում, էջ 477-780, Հայ ժող. պատմություն, էջ 689:

Այսպիսով, վերջ տրվեց Կիլիկյան թագավորությանը, սակայն տարբեր լեռնային շրջաններում մինչև 1423 թ. Կիլիկյայում պահպանվեցին հայկական իշխանություններ, որոնք պայքարեցին թշնամու դեմ⁴⁵:

⁴⁵ Բիւզանդ Եղիայեան, Կիլիկիոյ Հայոց թագաւորութեան երեք դարերը (1070-1375), Երևան, 1994, էջ 83:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Կիլիկիայի հայկական պետության պետական կարգը XI-XII դդ.

Կիլիկիայի հայկական թագավորության պետական կարգը և բնույթը քննարկելիս ուսումնասիրողներն ուշադրություն են դարձրել մի շարք հանգամանքների վրա.

Առաջին հերթին հաշվի են առել այն, որ Կիլիկիա ներգաղթած հայերն իրենց հետ բերել են դեռևս Բագրատունյաց հարստության օրոք Հայաստանում գոյություն ունեցող ավատատիրական կամ ֆեոդալական հարաբերությունները⁴⁶:

Այնուհետև պետք է նշել, որ այդ հարաբերությունները ձևավորվել և ամրապնդվել են բյուզանդական ֆեոդալական կարգերի ազդեցության ներքո, այսինքն՝ այստեղ X դարից սկսվել էր ֆեոդալական հարաբերությունների զարգացումը⁴⁷, որովհետև մինչև Ռուբինյան իշխանության հաստատումը Կիլիկիան 120 տարի շարունակ եղել էր բյուզանդական պրովինցիա:

Եվ վերջպես, Արևմտյան խաչակիրների, արաբների և սելջուկների հետ հայերի տնտեսական և ռազմական կապերը որոշակի դեր են խաղացել Կիլիկիայի պետական կարգի և իրավական հարաբերությունների ձևավորման գործում⁴⁸:

Այս առիթով Ա. Գալստյանը գրում է, որ «կիլիկյան հայկական թագավորությունը, գտնվելով Արևելքի ու Արևմուտքի սահմանագլխին, շփման մեջ լինելով արևմտաեվրոպական ֆեոդալների և խաչակիրների հետ, իրենից ներկայացնում էր բավականին զարգացած մի երկիր, որտեղ ֆեոդալական հարաբերությունները գտնվում էին իրենց զարգացման բարձր աստիճանի վրա»⁴⁹:

⁴⁶ Մամուել Անեցի, էջ 204:

⁴⁷ Г. Микаелян, ст. 238.

⁴⁸ Ա.Սուքիաշյան, էջ 152, Г. Микаелян, ст. 238.

⁴⁹ Ա.Գալստյան, Մմբատ Սպարապետ, Երևան, 1961, էջ 135 (այսուհետ՝ Ա. Գալստյան):

Մենք համամիտ ենք Ս. Բոռնագյանի հետ նրանում, որ Կիլիկիայի հայկական պետությունն իր 300-ամյա գոյության ընթացքում հիմնականում անցել է 2 շրջան:

Առաջինը հայտնի է որպես ֆեոդալական մասնատվածության շրջան, որն սկսվում է Ռուբինյան իշխանության հաստատման թվականից (1080) և վերջանում 1198-ին:

Երկրորդը կենտրոնացած միապետության շրջանն է, որն սկսվում է թագավորության հաստատման թվականից (1198) և վերջանում 1375 թվականի՝ Կիլիկիայի հայկական թագավորության անկումով⁵⁰:

Ըստ վերոնշյալ հեղինակի՝ այս երկու շրջանները հասարակական քաղաքական կառուցվածքով սերտորեն կապված են իրար հետ, ընդ որում՝ 2-րդ շրջանն 1-ին շրջանի տրամաբանական շարունակությունն է ավելի զարգացած աստիճանում⁵¹:

Նա համամիտ է Ս. Երեմյանի կարծիքին, որ Կիլիկիայի հայկական պետությունը թեև կազմավորվել և իր գոյությունը պահպանել է բուն Հայաստանից դուրս, սակայն հասարակական կառուցվածքով այն հայկական պետական կյանքի կազմակերպվածության առավել զարգացած ֆեոդալական հարաբերությունների ժամանակաշրջանն է⁵²:

Այնուամենայնիվ, 1-ին իշխանական շրջանը ֆեոդալական մասնատվածության շրջան էր, երբ բազմաթիվ իշխաններ՝ Բյուզանդական կայսրության վասալներ, ինքնուրույն տիրակալներ էին իրենց տիրույթներում: Այդ իշխանների դեմ պայքարում էին Ռուբինյանները, որոնք ուժեղ կենտրոնացած պետություն ստեղծելու նպատակով ձգտում էին ի մի հավաքել հողերը՝ զավթելով նաև կայսերական տիրույթները⁵³:

⁵⁰ Ս. Բոռնագյան, էջ 40:

⁵¹ Նույն տեղում:

⁵² С. Еремян, Опыт переодизации истории Армении эпохе феодализма “Вопросы истории”, N7, 1951, ст. 59.

⁵³ Ա. Մուքիսյան, էջ 152:

Վերոնշյալ պայքարը մի կողմից տարվում էր օտար տիրապետությունների՝ Բյուզանդիայի, սելջուկ-թուրքերի և Անտիոքի իշխանության դեմ, և մյուս կողմից՝ երկրի ներսում առաջնության համար պայքարող անկախ Ռուբինյան իշխանության և Բյուզանդիայի վասալ Լամբրոնի Հեթումյանների միջև⁵⁴: Այդ պայքարը վերջնականպես պսակվում է 1198 թ. Կիլիկիայի հայկական պետությունը թագավորություն հռչակումով:

Այս բազմիշխանության շրջանում յուրաքանչյուր իշխանության գլուխ կանգնած էր «իշխանաց իշխանը», «մեծ իշխանը» կամ «Պարոն Հայոց»-ը⁵⁵: «Իշխանաց իշխան» տիտղոսը Բագրատունյաց հարստության ժամանակ կրել է թագավորի փոխանորդը: Սա սովորաբար կրում էր թագավորի եղբայրներից մեկը կամ թագաժառանգը⁵⁶: Նրան էին ենթարկվում երկրի մեծ ու փոքր պաշտոնյաները՝ գործակալ իշխաններն ու մանր ազնվականները: Կիլիկիայի թագավորության շրջանում իշխանաց իշխանը կամ ավագ պարոնը, այսպես ասած, «երկրորդ արքան» էր: Թագավորության շրջանում իշխանաց իշխանը նախագահում էր թագավորական խորհուրդը կամ արքունի աստյանը⁵⁷: Թագավորության շրջանում «իշխանաց իշխանի» տիտղոսը կրում էին սպարապետները:

1-ին շրջանում իշխանաց իշխանը երկրի կամ իր տիրապետության տակ եղած գավառների և ուրիշ փոքր իշխանությունների միակ պյուզերենն էր ու վայելում էր թագավորական պատիվ⁵⁸: Նրան էին ծառայում մեծ ու փոքր իշխաններ և իրենց ծառայության փոխարեն՝ ստանում էին պարգևներ՝ հողեր, կալվածքներ (ղրանց դիմաց նրանք կատարում էին վասալական

⁵⁴ Ս. Բոռնազյան, էջ 41:

⁵⁵ Սամուել Անեցի, էջ 208:

⁵⁶ Հայ ժողովրդի պատմություն, էջ 271:

⁵⁷ Ս. Բոռնազյան, էջ 41:

⁵⁸ Սմբատ Սպարապետի Տարեգիրք, էջ 139:

պարտականություններ՝ գործակալական պաշտոններ, հատկապես՝ զինվորական ծառայություն)⁵⁹:

«Հին Հայաստանում իրենց գրաված դիրքով թագավորին հաջորդում էին բղեշխները, որոնք որպես դքսություններ (dushes), գրեթե անկախ մանր պետություններ էին. նրանցից ցածր կանգնած էին ավագ նախարարները, այնուհետև՝ կրտսեր նախարարները և վերջապես՝ ազատները»⁶⁰: Կիլիկիայում այս ինստիտուտներին մենք հանդիպում ենք նոր անուններով՝ նախարարի փոխարեն՝ իշխան կամ բարոն, նախկին տերի փոխարեն՝ սինյոր կամ սինոռ⁶¹: Բոլոր այդ բարոնները, բերդակալները, իշխանները և այլոք Կիլիկիայում սկզբնական շրջանում բյուզանդական կայսեր վասալներ էին, իսկ հետագայում՝ հայոց թագավորի: Նրանք ծառայության համար հող էին ստանում, բայց միաժամանակ հայրենակալվածքների տերեր էին, ունեին իրենց ալոդները կամ հայրենիքները⁶²:

Իշխանաց իշխանը նստում էր իշխանանիստ քաղաքում, որն սկզբնական շրջանում Վահկա բերդն էր⁶³, հետագայում՝ Միսը⁶⁴, որտեղ և պահվում էր պետական դիվանը, ուսումնասիրողներից Գ. Միքայելյանն այս առիթով գրում է. «Պետության մայրաքաղաք Միսում գոյություն ունեւ պետական արխիվ, որը վերացավ մամլուքների արշավանքի ժամանակ»⁶⁵:

Իշխանաց իշխանը պահում էր մշտական զորք, որի կորիզը կազմում էր ազատներից կազմված հեծելազորը՝ «Հայկական այրուձին»: Նրա բանակի անբաժանելի մաս էր կազմում նաև ռամիկներից կազմված հետևակը: Ս. Անեցին վկայում է, որ հայ իշխանները Հայաստանից Կիլիկիա և Փոքր Ասիայի բյուզանդական նահանգներ գաղթել էին ազատներից կազմված զորքերով և ռամիկ

⁵⁹ Նույն տեղում, էջ 192:

⁶⁰ Ա. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, Երևան, 1957, էջ 110-190:

⁶¹ Ա. Սուքիասյան, էջ 154:

⁶² Նույն տեղում, էջ 155:

⁶³ Սամուել Անեցի, էջ 204:

⁶⁴ Հայ ժող.պատմություն, էջ 684:

⁶⁵ Դ. Микаелян, ст 255-256.

հետևակով⁶⁶: Այս մասին խոսում է նաև Ուռհայեցին իր «Ժամանակագրության» մեջ⁶⁷:

Իշխաններն իրենց գորքերը դնում էին իշխանաց իշխանի տրամադրության տակ՝ կովելու արտաքին թշնամիների դեմ⁶⁸: Բանակի զինվորները ստանում էին թոշակ կամ ռոճիկ⁶⁹, որը կոչվում էր հոռոգ⁷⁰, կամ էլ ռազմավարից մի մաս⁷¹: Այդ մասին վկայում է նաև Ղ. Ալիշանը⁷²:

Իշխանաց իշխանի ընդհանուր եկամուտների մեջ էին մտնում նաև բնակչությունից գանձված հարկերը, մաքսերն ու տուրքերը, որոնք բավականին հսկայական գումար էին կազմում⁷³:

Ս. Բոռնագյանի կարծիքով, իշխանաց իշխանն ամբողջ երկրի իշխանների գլխավոր իշխանն ու սյուզերենն էր՝ առանց թագավորական թագի: Ռուբինյան հարստության իշխանաց իշխաններից՝ Թորոս Բ-ից (1145-1169) սկսյալ՝ փաստորեն չէին ենթարկվում ոչ մի պետության, եթե անգամ վասալական կախման մեջ էին Անտիոքի խաչակիր պետությունից, ապա դա արդեն ավելի շատ կրում էր ձևական բնույթ, որը վերջնականպես թոթափվեց 1194 թվականին Լևոն Բ իշխանաց իշխանի օրոք⁷⁴: Համամիտ ենք Ս. Բոռնագյանի այն մտքի հետ, որ Ռուբինյան իշխանության կազմավորման շրջանում արևմտաեվրոպական և բյուզանդական ֆեոդալիզմին հատուկ, պետական քաղաքական կարգին վերաբերող, մի շարք տերմիններ մուտք են գործել և սկսվել են կիրառվել Կիլիկիայի պետական քաղաքական կառուցվածքում⁷⁵:

⁶⁶ Մամուել Անեցի, էջ 116:

⁶⁷ Ուռհայեցի, էջ 49:

⁶⁸ Մամուել Անեցի, էջ 116:

⁶⁹ Թուղթ ընդհանրական արարեալ երիցս երանեալ սուրբ հայրապետին մերոյ տեառն Ներսիսի Շնորհալոյ, էջմիածին, 1865, էջ 100:

⁷⁰ Մխիթար Գոշ, էջ 82:

⁷¹ Մամուել Անեցի, էջ 117:

⁷² Միսուան, էջ 484:

⁷³ Միսուան, էջ 59:

⁷⁴ Ս. Բոռնագյան, էջ 44:

⁷⁵ Նույն տեղում, էջ 44:

Այսպես Խաչակիր ֆրանկ իշխանները Ռուբեն Ա-ի որդի Կոստանդինի (1095-1100) իշխանությունը կոչում էին կոմսություն, իսկ Կոստանդինին անվանում էին «մարքիզ»։ *«յորոց և կոմսութեան անուն ստացեալ Մարքիզ զնա վերակոչէին»*⁷⁶։ Սմբատ Սպարապետն իր «Դատաստանագրքում» այս տիտղոսն իշխանի իմաստով նույնպես օգտագործել է⁷⁷։

Բյուզանդական տիրապետության ժամանակաշրջանում իշխանաց իշխանները կրում էին «սեբաստոս» կամ «սևաստոս»⁷⁸, «պան սևաստոս»⁷⁹, «պրոսևաստոս»⁸⁰ տիտղոսները «...Ստեփանէ եղբայր Թորոսի սևաստոսի...», «...մնացեալ Պան սևաստիան Թորոս յերկիր հայրենի իւր.», իսկ իշխանությունները կոչվում էին սեբաստոսություններ⁸¹։

Վերոնշյալ տիտղոսները գործածության մեջ էին մտել բյուզանդական կայսեր Ալեքսեյ Կոմնենոսի ժամանակ (1081-1118) և տրվելիս են եղել կայսերական ընտանիքից դուրս, կայսրի առավել աչքի ընկնող վասալներին՝ նպատակ ունենալով սիրաշահել և բյուզանդական կայսրությանը ենթարկել այդ տիտղոսներն ստացող իշխաններին⁸²։ Հարկ է նշել, որ Կիլիկիայում Ալեքսեյ կայսեր կողմից Հեթում իշխանաց իշխանն արժանացել է «սևաստոս» տիտղոսին. *«Յետ սորա վախճանին տիրեաց որդի իւր Հեթում՝ հայրենի աթոռոյս, և պատուեցաւ ի Յունաց արքայէն Ալեքսէ սեպաստոս անուամբ»*⁸³։ Բյուզանդական պետության կայսրից հետո «պան սևաստոսությունը» 5-րդ կարևոր տիտղոսն էր, «պրոտոսևաստոսությունը»՝ 13-րդ, իսկ «սևաստոսը»՝ 17-րդ⁸⁴։ Հավելենք նաև, որ արդեն XIV դ. սևաստոս տիտղոսը փոխել էր իր բովանդակային իմաստը և աղբյուրներում հիշվում է, որպես արքունի պաշտոնյա։ Օրինակի համար նշենք

⁷⁶ Մամուել Անեցի, էջ 214:

⁷⁷ Դատաստանագիրք, էջ 8:

⁷⁸ Ուոհայեցի, էջ 428:

⁷⁹ Նույն տեղում, էջ 423:

⁸⁰ Միսուան, էջք 71, 81-82, 313:

⁸¹ Նույն տեղում, էջ 544:

⁸² Խաչակիրները և հայերը, էջ 158:

⁸³ Մամուել Անեցի, էջ 225:

⁸⁴ Ս. Բոռնագյան, էջ 45:

Եսայաս Կ.Պոլսի պատրիարքի (1323-1334)⁸⁵ Կոստանդին Դ Լամբրոնացի Կաթողիկոսին ուղղված իր պատասխան նամակի որոշ հատված, ըստ որի՝ «սեբաստոս» տիտղոսը հիշում է, որպես արքունի սենեկապետ. «Ձեր այս աստծուն (թարգմանությունը Հ. Բարթիկյանի) հաճելի և փրկիչ գործի համար մենք ընտրեցինք և ձեզ ուղարկեցինք տեր Միքայել Կալլիկրինիտեսին, ամենահարգելի սեբաստոսին... Արքունի սենեկապետը պիտի գնա նախ սուլթանի մոտ...»⁸⁶:

Այսպիսով, հայ իշխանները, իրենց հետ բերելով ֆեոդալական հարաբերությունները, կարողացան ազդել տեղի՝ Բյուզանդական կայսրությունից մնացած պետական համակարգի ձևի վրա և ստեղծեցին հզոր հայկական իշխանական համակարգ, որը պարարտ հող դարձավ իշխանությունը թագավորություն հռչակելու գործում: Նույն կարծիքն է արտահայտում նաև Ս. Բոռնազյանը, որ առաջին շրջանի քաղաքական-պետական կառուցվածքի մասին տեղեկությունները բավարար են՝ ցույց տալու համար, որ այդ ժամանակաշրջանում Կիլիկիայի հայկական իշխանությունը, այսինքն՝ պետական կառավարման օղակները բավականին բարձր զարգացման էին հասել⁸⁷:

⁸⁵ Հ. Բարթիկյան, Նոր նյութեր Կիլիկիայի հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին, «Բանբեր մատենադարանի», Երևան, 1958, N4, էջ 290 (այսուհետ՝ Հ. Բարթիկյան):

⁸⁶ Նույն տեղում, էջ 293:

⁸⁷ Ս. Բոռնազյան, էջ 45:

Կիլիկիայի պետական կարգը թագավորության շրջանում

Ս. Բոռնազյանը նշում է, որ Կիլիկիայի հայկական թագավորության մեջ, որն ինքնամփոփ և կենտրոնացած մի պետություն էր, նոր պայմաններ ստեղծվեցին Կիլիկիայի հասարակության հետագա քաղաքական և տնտեսական կյանքի զարգացման համար⁸⁸:

Ըստ Ս. Բոռնազյանի՝ Կիլիկիայի թագավորության պետական քաղաքական կյանքում հիմնականում շարունակվում էին նախորդ՝ իշխանական շրջանին բնորոշ գծերը: Թագավորության պետական կարգը որոշ չափով նման էր Անգլիայի, Ֆրանսիայի պետական քաղաքական կառուցվածքին⁸⁹: Հ. Մանանդյանը նշում է, որ միջնադարյան Ֆրանսիայում աստիճանակարգության սանդուղքն ունեցել է հետևյալ ստորակարգումները. թագավորից հետո վասալական ամենավերին շերտը կազմում էին այստեղ խոշորագույն իշխանները, որոնք թագավորի անմիջական վասալներն էին և մեծ մասամբ նրանից գրեթե անկախ էին: XI դարում սրանք անվանվում էին դքսություններ (duches) և կոմսություններ (comtes): Սրանցից ներքև էին 2-րդ կարգի իշխանությունները, որոնք վասալներն էին դուքսերի ու կոմսերի և անվանվում էին բարոններ (baronnies): Ավելի ցածրում էին կանգնած դերակոմսությունները (vicomtes) և դոյակատերերը (chatellenies), որոնք վասալներն էին վերոհիշյալ իշխանների: Իսկ բոլորովին ներքևում էին բազմաթիվ մանր սենյորները, որոնք էլ վասալներն էին իրենցից բարձր կանգնած ֆեոդալների⁹⁰: Հետաքրքիր է նաև Ս. Բոռնազյանի այն միտքը, որ Կիլիկիայի պետական քաղաքական համակարգերում պահպանվել էին նաև բուն Հայաստանի Արշակունյաց և Բագրատունյաց թագավորությունների պետական քաղաքական կառուցվածքին և ավանդությանը բնորոշ գծեր, ընդ որում՝

⁸⁸ Ս. Բոռնազյան, էջ 45:

⁸⁹ Նույն տեղում:

⁹⁰ Հ. Մանանդյան, էջ 26:

Կիլիկիայի հայկական թագավորության պետական կարգը հանդիսանում էր նույն ֆեոդալական պետական կառուցվածքի առավել զարգացած բարձր աստիճանը: Սակայն չենք կարող անտեսել նաև Կիլիկիայի պետական կարգի վրա ազդող բյուզանդական ֆեոդալական կարգերի ազդեցությունը⁹¹:

Հայ թագավորները պահպանել են իրենց նախորդների օրինակով արքայական գահը ավագ որդուն ժառանգելու սովորությունը: Վ. Բաստամյանը գրում է. «Խորենացին պատմում է, Վաղարշակ Ա-ը իւր առաջին որդին Արշակը պահեց իւր մոտ իբրև թագաժառանգ ևս հաջորդ, իսկ իւր միւս որդիքը բնակեցրեց ուրիշ գավառներում յանձնելով դոցա կառավարութիւնը...: Պատմաբանն ավելացնում է, թե ևս եղև այս յայսմհետէ եւ առ յապայ օրենք ի մեջ արշակունեաց: Եւ յիրավի Արշակունեաց մեջ խաղաղ ժամանակ միշտ առաջին կամ երիցագոյն որդին թագավորում էր իւր հօր մահից հետոյ: Դոյն կարգը պահպանվում էր ևս Բագրատունեաց ժամանակ...: Այդ կարգը պահպանվում էր եւ Կիլիկիայի Ռուբինեանց սակավակեաց թագավորութեան ժամանակ»⁹²: Այս մասին վկայում է նաև Սմբատ Սպարապետը, թե. *«նմոսով է զանդրանիկին կացուցանել յաթոռ ինքնակալութեան»*⁹³: Սակայն Ա. Գալստյանն այս խնդրի վերաբերյալ գրում է, որ «թագավորի ընտրության հարցում Սմբատը չի կառչում հին սովորությանը, ըստ որի՝ գահն անպայման ժառանգում էր ավագ որդին, այլ առաջարկում է թագավորական գահը հանձնել արքայորդիներից լավագույնին»⁹⁴, սա ինքնին խոսում է Կիլիկայում ֆեոդալական կարգերի աստիճանական զարգացման մասին:

Կիլիկիայի ֆեոդալական աստիճանակարգության հիմքում ընկած էր արևմտավրոպական ֆեոդալիզմին հատուկ «Իմ վասալի վասալն իմ վասալը չէ»⁹⁵

⁹¹ Ս. Բոռնագյան, էջ 46:

⁹² Մխիթար Գոշ, էջ 300:

⁹³ Դատաստանագիրք, էջ 16, սույն հոդվածը նույնությամբ հանդիպում ենք Մխիթար Գոշի «Դատաստանագրքում», էջ 300:

⁹⁴ Ա. Գալստյան, էջ 135:

⁹⁵ Ս. Բոռնագյան, էջ 48:

սկզբունքը: Սմբատ Սպարապետի տեղեկության համաձայն՝ վերոնշյալ միտքն են արտահայտում նրա հետևյալ տողերը. «Եւ իշխան, զոր ինք թագաւոր լինի իշխանացուցել, նա ինքն կարէ ձգել, երբ ու կամի, յիշխանութենէն, և խրատել և այնել, զինչ իր պիտի, բայց զայլ ինքնակալք, որ ինքեանք չլինին իշխան դրել, նա չկարեն առանց այլ իշխանաց, որ իր ընկերք լինին, ոչ զնա արքորել, և ոչ ձգել»⁹⁶:

Ինչպես ֆեոդալական Ֆրանսիայում⁹⁷, այնպես էլ Կիլիկիայում թագավորները մյուս խոշոր իշխանների նկատմամբ ունեին բացառիկ լիազորություններ, այսինքն՝ միայն արքային վերապահված իշխանություն: Ըստ Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի»՝ միայն թագավորն իրավունք ուներ դրամ հատել, քաղաք ու բերդ, նույնիսկ, կամուրջ կառուցել. «Եւ թագաւորն է, որ կարէ դէկան շինել և քաղաք և բերդ և մեծ գետոյ կանդարայ և....»⁹⁸: Սակայն հարկ է նշել, որ թագավորի առանձնաշնորհային իրավունքն ավելի շատ պետական, քան անձնական բնույթ ուներ: Բացի վերոնշյալ իրավունքներից՝ արքան ուներ ևս այլ «հատուկ» իրավասություններ, օրինակ՝ թագավորին էին պատկանում երկրի բոլոր ոսկու հանքերը⁹⁹, ինչպես նաև պատերազմի ժամանակ որպես ռազմավար ձեռք բերված ոսկին¹⁰⁰: Միայն արքան իրավունք ուներ մաքսատուրք վերցնել արտասահմանից ներմուծվող ապրանքներից, նա էր երկրի բոլոր զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարը, նա էր ղեկավարում արտաքին հարաբերությունները, ընդունում և ուղարկում էր դեսպաններ ու դեսպանություններ, պատերազմ էր հայտարարում և հաշտություն կնքում, օրենքներ էր հրապարակում և լուծում շատ ուրիշ կարևորագույն հարցեր:

Ա. Սուրբիասյանը և Ս. Բոռնազյանը նշում են, որ դա չի նշանակում Կիլիկիայի թագավորի իշխանության անսահմանափակ իրավունքներով ու

⁹⁶ Դատաստանագիրք, էջ 46:

⁹⁷ Ж. Дюби, ст. 331-334.

⁹⁸ Դատաստանագիրք, էջ 16:

⁹⁹ Նույն տեղում, էջ 18:

¹⁰⁰ Նույն տեղում:

բացարձակ միապետի լիազորություններով օժտված լինելու մասին¹⁰¹: Տեղին է նշել, որ XIII-XIV դարերում միջազգային դրության փոփոխման զուգընթաց՝ փոխվել են նաև թագավորի իրավունքներն ու լիազորությունները: Երկիրը կառավարվում էր ավատատիրական արքունիքի միջոցով, իսկ արքունիքի գլուխ կանգնած էր թագավորը, որն իր մեջ էր մարմնավորում երկրի գերագույն իշխանությունը¹⁰²:

Ս. Բոռնազյանը կարծում է, որ ի տարբերություն բուն Հայաստանի Արշակունյաց և Բագրատունյաց ժամանակաշրջանի թագավորական արքունիքի և պետական կառավարման՝ Կիլիկիայում արևմտաեվրոպական և Սիրիայի ֆրանկ պետությունների օրինակով, որպես երկրի կառավարման օրգան, արքունիքում կազմակերպվել էր բարձրագույն, վերին կամ արքունի ատյան¹⁰³: Թեև ատյանը խորհրդատու օրգան էր, սակայն ձևով և բովանդակությամբ նման էր Արշակունյաց ժամանակաշրջանի «աշխարհաժողովներին», որոնցում քննարկվում էին կարևորագույն խնդիրներ: Արշակունյաց ժամանակաշրջանի աշխարհաժողովների ընթացքում մշակվել և ընդունվել են պարտադիր ընդհանուր կանոններ ողջ Հայաստանի համար: Այդ աշխարհաժողովներին, բացի բարձր և ստորին ազնվականությունից, ներկա են եղել նաև «*ռամիկ շինական*»-ները և «*դասապետք շինականաց*»-ը¹⁰⁴:

Բարձրագույն կամ վերին ատյանը ժամանակի ընթացքում սահմանափակում էր թագավորի իշխանությունը: Դա բացատրվում էր Կիլիկիայի թագավորության ճգնաժամով՝ թշնամի պետությունների, հատկապես՝ Եգիպտոսի մամլուքների, Իկոնիայի սուլթանության հարձակումներով: Սակայն երկրի ճգնաժամից դուրս գալուն պես, երբ հզորանում էր երկրի տնտեսությունը, բարենպաստ պայամաններ էին ստեղծվում թագավորության զարգացման

¹⁰¹ Ս. Բոռնազյան, էջ 49, Ա. Սուքիասյան, էջ 164:

¹⁰² Նույն տեղում, էջ 49:

¹⁰³ Նույն տեղում, էջ 50:

¹⁰⁴ Հ. Մանանդյան, էջ 83:

համար, և այդ ժամանակ ուժեղանում էր թագավորի մենիշխանությունը, իսկ վերին աստյանը հանդես էր գալիս, որպես խորհրդատու օրգան: Սակայն ցանկանում ենք ավելացնել, որ «Երուսաղեմի խաչակիր թագավորությունում թագավորի իշխանությունը նույնպես թույլ էր, ինչպես օրինակ՝ Ֆրանսիայում XI-XII դդ.: Կիլիկյան Հայաստանի թագավորի իշխանությունը մյուս ֆեոդալների նկատմամբ ավելի ուժեղ ու հեղինակավոր էր, քան նույն ժամանակաշրջանում եվրոպական երկրներում և Երուսաղեմում խաչակիր սյուզերենի իշխանությունը վասալների նկատմամբ»¹⁰⁵:

Սմբատ Սպարապետը հաղորդում է, թե *«Թագավորք յԱստուծոյ են կարգած»*¹⁰⁶, իբրև ոչ ոք իրավունք չունի նրանց գահից արքորելու, սակայն նույն հոդվածի շարունակության մեջ նշում է, թե *«նա թե հայնց պիղծ լինին, որ չկարէ հանդուրժել աշխարհն, նա այլ վայ եկեղեցովն և ամեն բնակչօք երկրին կարին արքորել»*¹⁰⁷: Սա ապացուցում է այն միտքը, որ կիլիկյան շրջանում կատարվում էին աշխարհաժողովներ: Ինչպես վերը նշեցինք, դրանք հրավիրվում էին, հատկապես, երկրի ծանր պայմաններից ելնելով:

Երկրի ողջ իշխանությունը կենտրոնացած էր ավատատիրական դասակարգի ձեռքում, որի կենտրոնական օրգանն արքունիքն էր, հետևաբար հենց արքան էլ արքունիքի որոշումները վավերացնողն էր:

Կիլիկիայի թագավորները ստորագրում և իրենց անվանում էին «հայերի թագավոր»: Մեզ հայտնի է, որ «թագավոր» ձևը բյուզանդական կայսրերը վերապահել էին իրենց. IX դարից բյուզանդական տիրակալները հիշատակվում են հատուկ տիտղոսով՝ «բասիլեոս» (βασιλευσ) ձևով, որը նշանակում է թագավոր¹⁰⁸,

¹⁰⁵ Г. Микаелян, ст. 251.

¹⁰⁶ Դատաստանագիրք, էջ 46:

¹⁰⁷ Նույն տեղում:

¹⁰⁸ История Византий, Том 3, 1967, ст. 36.

իսկ մնացած տիրակալները բյուզանդացիների կողմից համարվել են արքունտներ՝ այսինքն ղեկավարներ¹⁰⁹:

Սմբատ Սպարապետն իր Դատաստանագրքի առաջաբանում իր մասին խոսում է հետևյալ ձևով. «...*եղբայր բարեպաշտ թագաւորին Հայոց Հեթմա*»¹¹⁰: «Բարեպաշտ» ձևից բացի՝ կիլիկյան թագավորներն օգտագործում էին նաև «Թագավոր ամենայն Հայոց» տիտղոսը, որը մենք կարող ենք տեսնել Լևոն Գ-ից մեզ հասած արծաթե դրամներից մեկում¹¹¹: «Ամենայն Հայոց» տիտղոսն օգտագործել է նաև Լևոն Ե թագավորը՝ մեզ հասած սիցիլիացի վաճառականներին շնորհած առևտրական արտոնագրերից մեկում «*Լեւոն Թագաւոր Ամենայն Հայոց*»¹¹²: Հետաքրքիր է, որ Ղևոնդ Ալիշանն իր «Սիսուան» երկում տեղեկացնում է, որ «Ամենայն միայն ի խորագրի առաջնոյ թղթոյ մերոյս Լեւոնի առ Պապն գտանի, և ոչ բնաւ յայլ թուղթսն կամ ի պարգեւագրի»¹¹³ :

Այս առիթով նշենք, որ Ս. Բոռնագյանը քննադատում է Ղևոնդ Ալիշանին՝ նկատի ունենալով «այն ենթադրությունը, որ իբր թե Լևոն Գ-ն իրեն անվանելով «Ամենայն Հայոց թագավոր», նկատի ուներ նաև բուն Հայաստանը»¹¹⁴: Սակայն հակառակ Ս. Բոռնագյանի՝ դիտենք, որ Ղևոնդ Ալիշանն այդպիսի միտք չի արտահայտել, հետևաբար հարկ ենք համարում մեջբերել նրա խոսքերն այդ կապակցությամբ. «*Առ թագաւորութեամբ Լեւոնի՝ մեծ մասն ազգիս մերոյ ընդ իշխանութեամբ էր Սելջուկեանց և Վրաց՝ ի մեծ Հայս, ի Փոքրն՝ ընդ Սուլտանօք Բկոնիոնի, Սեբաստիոյ, Կարնոյ, և այլն. յորոց վերայ չունէր ինչ տերութիւն թագաւոր Սիսուանայ. յետ նորա՝ հզորագոյն տերութիւն Թաթարաց գրեաթէ նուաճեաց, հանդերձ այլովք, զամենայն Հայս, և նաև զՍիսուան. ապա թագաւորք սորին չունէին իրաւունս կոչելոյ Ամենայն Հայոց, բայց եթե այնու մտօք՝ զի ոչ գոյր*

¹⁰⁹ История Византий, ст 157.

¹¹⁰ Դատաստանագիրք, էջ 15:

¹¹¹ Սիսուան, էջ 380-381:

¹¹² Նույն տեղում, էջ 363-365:

¹¹³ Նույն տեղում, էջ 482:

¹¹⁴ Ս. Բոռնագյան, էջ 54:

այլ թագաւոր Հայ՝ Բաց յինքեանց, կամ զի թերևս այնու պատուական անուամբ յիշեալք լինեին յաղօթս եկեղեցոյ՝ գոյգ ընդ կաթողիկոսին ամենայն Հայոց»¹¹⁵: Սակայն մենք ծանոթ ենք մի շատ հետաքրքիր նամակի, որն ուղղված էր Լևոն Ե-ին Եսայաս պատրիարքի կողմից, այդ նամակում հայոց արքան հիշվում է որպես «Կիլիկիայի, Իսաւրիայի և ամբողջ Հայաստանի մեծ թագավոր»¹¹⁶: Մեր կարծիքով այդ ձևն օգտագործել են հայոց թագավորին սիրաշահելու համար: Համամիտ ենք Ս. Բռնազյանի այն մտքի հետ, թե ««Ամենայն հայոց» տերմինն օգտագործելով՝ Կիլիկիայի թագավորները հանդես են եկել ոչ թե ամբողջ Հայաստանի, այսինքն՝ Կիլիկյան Հայաստանի և բուն Հայաստանի սյուզերեն թագավորներ, այլ նրանք այդ արել են՝ նպատակ ունենալով ներկայացնել այն հայերին, որոնք XI-XIV դարերում ցրված էին Միջերկրական ծովի արևելյան ափերին՝ Կիլիկիայում, Կիպրոսում, Ասորիքում, Սիրիայում, Պաղեստինում, Եգիպտոսում և հատկապես՝ Սիրիայի ֆրանկ պետություններում»¹¹⁷: Այս առիթով Ա. Սուքիասյանը նշում է, որ «սրանով ցանկանում էին ցույց տալ իրենց անկախությունը բյուզանդական ու գերմանական կայսրերից ու Հռոմի պապից, ինչպես նաև այդ արվում էր թագավորի սյուզերենությունը վասալների նկատմամբ արտահայտելու համար»¹¹⁸:

Ղևոնդ Ալիշանի համաձայն՝ կիլիկյան թագավորները հպատակների կողմից հորջորջվել են նաև «Սուրբ», «Բարեպաշտ», «Աստուածագոր», «Աստուածասեր», «Յաղթող» և այլ պատվանուններով¹¹⁹:

¹¹⁵ Միսուան, էջ 482:

¹¹⁶ Հ.Բարթիկյան, էջ 294: Բարթիկյանը նշում է, որ Թագավոր Բառը նամակում արտահայտված է ոչ թե βασιλευσ, այլ ρηγασ, լատիներեն rex տերմինով. այսպես բյուզանդացիներն անվանում էին ոչ բյուզանդական թագավորներին և կայսրերին՝ վերապահելով βασιλευσ-ը միայն իրենց կայսրերին, ինչը կրկին ապացուցում է վերոնշյալ միտքը:

¹¹⁷ Ս. Բռնազյան, էջ 54:

¹¹⁸ Ա. Սուքիասյան, էջ 160:

¹¹⁹ Միսուան, էջ 482, Սամուել Անեցի, էջ 204-208:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Կիլիկիայի հայկական պետության գործակալությունները

Ինչպես արդեն նշեցինք Կիլիկիայի հայկական թագավորությունը ղեկավարվում կամ կառավարվում էր արքունիքի միջոցով, որի գլուխ կանգնած էր երկրի թագավորը:

Ըստ Ղևոնդ Ալիշանի՝ «Ատեանքն՝ մանաւանդ արքունին կամ Վերինն՝ Դարպաս կոչէին»¹²⁰: Արքունիքը Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքում» նույնպես հիշվում է հենց «արքունիք», «դարպաս», «դուռ»¹²¹:

Ըստ Ս. Բոռնազյանի՝ արքունիքը կազմված էր կենտրոնական պետական կառավարող մարմիններից՝ գործակալություններից, որոնք գլխավորում էին Կիլիկիայի անվանի և խոշոր իշխանական տների ներկայացուցիչ իշխանները¹²²: Իշխանի՝ թագավորի հանդեպ կատարած պարտականությունները Սմբատ Սպարապետն անվանում է «ծառայություն», «հնազանդություն»¹²³, իսկ Հ. Մանանդյանը՝ «գործ», կամ «գործակալություն»¹²⁴: Ծառայությունն արտահայտվում էր թագավորի նկատմամբ վասալների կատարած մի շարք վարչական և զինվորական պարտականություններով, իսկ դրանք պայմանավորված էին հիմնականում թագավորից ստացված «հայրենի ժառանգութեան դիմաց»¹²⁵ պարտավորությամբ: Սույն երևույթն ընդունված էր նաև Ֆեոդալական Ֆրանսիայում XI-XII դարերում¹²⁶:

¹²⁰ Մխուան, էջ 486:

¹²¹ Դատաստանագիրք, էջք 17, 19, 64, 60:

¹²² Ս. Բոռնազյան, էջ 73:

¹²³ Դատաստանագիրք, էջ 17:

¹²⁴ Հ. Մանանդյան, էջ 61:

¹²⁵ Դատաստանագիրք, էջ 17:

¹²⁶ Ж. Дюби, ст. 334.

Ըստ Հ. Մանանդյանի, Ժ. Դյուբիի՝ գործակալության պարտականության հիմքում ընկած էր ֆեոդալական հողատիրության իրավունքը, հետևաբար այդ պաշտոնը հաճախ կրում էր ժառանգական բնույթ: Ֆեոդալիզմի շրջանում գերակշռող դեր էր խաղում կալվածատիրությունը, և խոշոր կալվածատերերի ազնվական բարձր դասը, լինելով ընդարձակ երկրների տերեր, ունեին այդ երկրներում քաղաքական իշխանության իրավունքներ¹²⁷: Ֆեոդալական ամեն մի պետություն բաժանված էր բազմաթիվ մանր իշխանությունների: Կալվածատիրական առանձին այդ մանր իշխանությունները, որոնք օժտված էին պետական կարգի իրավունքներով, Ֆրանսիայում անվանվում էին սենյորիա, Անգլիայում՝ մանոր իսկ Գերմանիայում՝ գրունդերշաֆտ (Grundherrschaft)¹²⁸: Ավելացնենք նաև, որ արևմտյան Եվրոպայում ֆեոդալիզմին հատուկ է եղել ֆեոդը (feodum, fief, Lehn), որից այս հասարակարգը ստացել է ֆեոդալիզմ անունը: Լայն իմաստով «ֆեոդ», ինչպես հայտնի է, անվանվել են այն հողամասերը (fief-terre) և այն պաշտոնները (fief-office) կամ իրավունքները, որ ստանում էին ազնվականները սենյորից հավատարմության ու ծառայության համար կամ պայմանով, իսկ նեղ ու իսկական իմաստով ֆեոդ են համարվել, գլխավորապես, ազնվականությանը տրված հողերը: Ծառայության փոխարեն տրված հողերը կոչվում էին պարզական հողեր: Կրիլիկայում գոյություն ունեին նաև արքունական հողեր, իշխանական և վանքապատկան հողեր¹²⁹:

Ըստ Ս. Բոռնազյանի՝ յուրաքանչյուր մեծ սենյոր ունեցել է բազմաթիվ վասալներ, որոնք ստացած լինելով նրանից մանր հողաբաժիններ, պարտավոր էին իրենց սենյոր-սյուզերենի հանդեպ կատարել որոշ ծառայություններ, գլխավորապես զինվորական¹³⁰: Զինվորական ծառայության առնչությամբ ասենք, որ Արևմտյան Եվրոպայում ֆեոդալական իշխանությունները պարտավոր էին

¹²⁷ Հ. Մանանդյան, էջ 32, Ж. Дюби, ст. 334.

¹²⁸ Հ. Մանանդյան, էջ 32:

¹²⁹ Ս. Բոռնազյան, էջ 156-202:

¹³⁰ Նույն տեղում, էջ 26-27:

պատերազմի ժամանակ տրամադրել սենյորին իրենց զինական ուժերը¹³¹: Նույն երևույթը գոյություն ուներ նաև ֆեոդալական Կիլիկիայում. վասալները պարտավոր էին պաշտպանել իրենց սենյորի բերդերն ու սենյորին¹³²:

Այսպիսով, ֆեոդ հողերի հիմնական առանձնահատկությունն է եղել հողատիրությունը զինվորական ծառայության պայմանով: Սրանք տարբերվել են պարզևական կալվածքներից (*beneficium*) նրանով, որ պարզևական հողատիրությունը եղել է ժամանակավոր և անձնական, իսկ ֆեոդալականը՝ ժառանգական ու տոհմային: Սակայն ժառանգական լինելով հանդերձ՝ ֆեոդալական հողատիրությունը եղել է պայմանական¹³³:

Կիլիկիայում թագավորության հիմնադրման ժամանակաշրջանից սկսած՝ հողատիրության ժառանգականության ավանդույթը հաճախ խախտվում էր. արդեն գործակալներ և աստիճանավորներ էին նշանակվում առավել հմուտ և ընդունակ ֆեոդալներից¹³⁴, նույն կարծիքն է արտահայտում նաև Ա. Սուքիասյանը¹³⁵:

Գործակալությունների և արքունական պաշտոնների ու նրանց կատարած պարտականությունների, զգեստների անվանման մասին տեղեկություններ է հաղորդում Ներսես Լամբրոնացին. *«Մի՛ կայք բացազլուխ ըստ լատինացւոց իշխանացն և թագաւորացն գոր չայք մագասիրացն ասեն ձև, այլ դիք չարփուխ՝ որպէս ձեր նախնիքն աճեցուցեք զհերս և զմորոս, որպէս ձեր հարքն, զգեցիք դուռայ լայն և թաւ, և մի փիլոն և զսպեալ պատմուճանս, հեծեք ի սախտեալ երիվարս ճուլանով, և ոչ յանսախտս լարինս լեհլով. տուք պատուական անուանց՝ ամիրայ և հեճուպ և մարզպան, և սպասալար և այսպիսին, և մի սիր պրօքսիմոս և*

¹³¹ Հ. Մանանդյան, էջ 60:

¹³² Ж. Дюби, ст. 334.

¹³³ Հ. Մանանդյան, էջ 17, Ж. Дюби, ст. 334.

¹³⁴ Ս. Բոռնազյան, էջ 59:

¹³⁵ Ա. Սուքիասյան, էջ 162:

գունդաստայլ և մարաջախտ և ձիաւոր և լէճ, որ լատինացոց է օրէն.»¹³⁶: Այստեղ պարզ երևում է նաև պետական կարգում արևմտաեվրոպական տերմինների անվանման դեմ Ներսէս Լամբրոնացու դժգոհությունը:

Սմբատ Սպարապետն էլ է հաղորդում իշխանների, այսինքն՝ նրանց պաշտոնների ու պարտականությունների մասին: Նա նաև նշում է, որ Կիլիկիայի հայ իշխաններն այդ պաշտոնների անվանումները որդեգրել են ֆրանկ պետություններից¹³⁷ (սրա մասին կխոսենք հետո):

Արքունիքում աստիճանավորներն ունեցել են իրենց հատուկ տեղը՝ աթոռը կամ բազմոցը¹³⁸, այս երևույթն ընդունված է եղել նաև բյուզանդական արքունիքում,¹³⁹ ինչպես նաև Արշակունյաց և Բագրատունյաց Հայաստանում¹⁴⁰:

Ս. Բոռնագյանը, նշելով այն հանգամանքը, որ Սմբատ Սպարապետը պաշտոնների բնույթի մասին չի խոսում, ենթադրում է, որ Կիլիկիայի հայկական պետությունում գործակալությունների մեծ մասն իր բովանդակությամբ և էությամբ նման է եղել Արշակունյաց և Բագրատունյաց հարստության ժամանակաշրջանում գործող գործակալություններին: Նա նաև ավելացնում է, որ «...հարևան պետությունների ներգործության տակ մտցվել են մի շարք նոր պաշտոններ ու գործակալություններ, որոնք միայն հորջորջմամբ են տարբերվում հայկականից, իսկ բովանդակությամբ գրեթե նման են»¹⁴¹:

Կիլիկյան հայկական պետության պաշտոնների անվանումների ներմուծման մասին Ս. Բոռնագյանի կարծիքին համամիտ է խոսում Սիրարփի Տեր-Ներսիսյան, թե «Հատուկ գործակալություններից շատերի հին անուններն ու պաշտոնյաների տիտղոսները փոխարինվեցին լատինական անուններով ու

¹³⁶ Ներսէսի Լամբրոնացույ թուղթ առ Քրիստոսագոր իշխողն մեր Լևոն ի նուաստ Ներսէսէ, որ ի Տարսուս սրբոյ եկեղեցոյ պաշտոնեայ, Վենետիկ, 1865, էջ 239-240:

¹³⁷ Դատաստանագիրք, էջ 41:

¹³⁸ Սիսուան, էջ 473:

¹³⁹ История Византии, ст. 160.

¹⁴⁰ Հ. Մանանդյան, էջ 28:

¹⁴¹ Ս. Բոռնագյան, էջ 60:

տիտղոսներով»¹⁴²: Մեր կարծիքով նա սխալվում է հետևյալում, թե «տերմինաբանության փոփոխությունները հաճախ ուղեկցվեցին այդ գործակալությունների բնույթի փոփոխությամբ` **ընդօրինակելով եվրոպական ֆեոդալիզմը**»¹⁴³, քանի որ մենք հետո կտեսնենք, որ գործակալությունների կամ պաշտոնների բնույթը նման են Արշակունյաց և Բագրատունյաց Հայաստանի գործակալություններին ու պաշտոններին:

¹⁴² Խաչակիրները և հայերը, էջ 324:

¹⁴³ Նույն տեղում, էջ 325:

Թագադիր գործակալություն

Ըստ Ղևոնդ Ալիշանի, Ս. Բոռնազյանի՝ Կիլիկիայում թագադիր գործակալություն իշխանական շրջանում, այսինքն՝ մինչև 1198 թվականը, գոյություն չունեին: Այս գործակալությունն ստեղծվել կամ վերականգնվել (նկատի ունենք հին ավանդույթը) է թագավորության հիմնադրումից հետո: Առաջին անգամ կիլիկյան հայկական պետությունում թագադիր գործակալությունն ստեղծել է Կոստանդին թագավորահայրը Հեթումյան հարստության հիմնադրման ժամանակ¹⁴⁴:

Ղևոնդ Ալիշանն իր աշխատանքում հիշատակում է արքաների օժման արարողակարգ, նա ենթադրում է, որ ըստ դրա են օժել Լևոն թագավորին: Այդ օժման արարողակարգի գրության մեջ հստակ երևում է թագադիր գործակալի պարտականությունները¹⁴⁵:

Այս գործակալի պարտականությունը թագադրության արարողության ժամանակ թագավորի գլխին թագ դնելն ու արքայական պատիվը կապելն էր, և իբրև արարողապետ՝ թագավորի հանդիսությանց հետևողն էր¹⁴⁶: Թագադիր գործակալը նաև թագավորի թագը պահողն էր. «...էւ Թագադիրն յաջ դին թագաւորին, ունելով զմիւ թագն ի ձեռին...»¹⁴⁷: Երբ թագադրության արարողությունից հետո սեղան էին նստում, թագավորի թագը միայն թագադիր գործակալ էր վերցնում. «Նա [այսինքն թագավորը] վստահանայ... Թագադիրն զմիւ թագն.»¹⁴⁸: Բացի այդ թագադիր իշխանը հիշվում է արքայի տոնական զգեստը փոխելիս. «Եւ յորժամ կամի թագաւորն փոխել զթագաւորական զգեստն՝ գայ Գունդստապլն, և թագադիրն Սենեկալն, մեծարեն զթագաւորն, և երթան

¹⁴⁴ Միսուան, էջ 475, Ս. Բոռնազյան, էջ 62:

¹⁴⁵ Նույն տեղում, էջ 472:

¹⁴⁶ Նույն տեղում, էջ 475:

¹⁴⁷ Նույն տեղում:

¹⁴⁸ Նույն տեղում:

*առաջի նորա մինչև ի Ջամբուն. և Ջամբուլայն կենաց ի ջամբուն. և ուննայ զգգեստն.
մտանեն և այս չորս աստիճանաւորքս, և փոխեն զգեստ թագաւորին և զթագն»¹⁴⁹:*

¹⁴⁹ Մխուան, էջ 475:

Սպարապետություն

Կիլիկիայում սպարապետը կամ գունդստաբլն էր այս գործակալության գլխավոր պաշտոնյան: Ղևոնդ Ալիշանը «գունդստաբլ» բառը ստուգաբանում է, թե «*բառն լատին (Comes stabuli) և փռանկացեալն յայնմանէ (Connetable, գոր և Յոյնք յեղեալ են յիրերանց բարբառ κοντασταβλος) յատկապես ախոռապետ նշանակէ, իբրն զի յաւետ հեծելոց գորականին առաջնորդէր, վասն որոյ և կոչելի հեծելպետ*»¹⁵⁰: Այստեղ Ղևոնդ Ալիշանը սխալվում է, որովհետև հեծելապետի պաշտոնը վարում էր սպասալարը:

Սպարապետը կամ գունդստաբլը թագավորական բանակի գլխավոր հրամանատարն էր թե՛ խաղաղ և թե՛ պատերազմի ժամանակ: Այս գործակալությունը թագավորը վստահում էր արքունական տան առավել մոտ կանգնած ֆեոդալներից մեկին, այսինքն՝ այս պաշտոնը ժառանգական չէր: Գունդստաբլի հեղինակությունը շատ բարձր է եղել երկրում և այդ էր հիմնական պատճառը, որ երկրում թագավոր չլինելու դեպքում նրանք էին դառնում թագաժառանգի խնամակալները: Նրան վերապահված էր բացառիկ իրավունք, որը չունեին մյուս բարոնները: Միայն Գունդստաբլն իրավունք ուներ թագավորի ներկայությամբ նրանից շուտ ձի հեծնել¹⁵¹:

Այս գործակալությունն առաջնակարգ և ամենակարևոր գործակալությունն է եղել (հիմնավորելով ասենք, որ աղբյուրներն առաջին հերթին թագավորից հետո հիշատակում են սպարապետին և ապա մյուս գործակալներին)¹⁵²:

Սպարապետության գործակալությունից բացի՝ Կիլիկիայի պետական բանակում հիշատակվում է նաև զինվորական մեկ այլ հրամանատարի՝ սպասալարի պաշտոնի մասին¹⁵³:

¹⁵⁰ Միսուան, էջ 484:

¹⁵¹ Նույն տեղում, էջ 485:

¹⁵² Նույն տեղում, էջ 475:

¹⁵³ Ս. Բոռնազյան, էջ 64:

Թագավորական պետական բանակում սպասալար էր անվանվում ողջ հեծելագործի հրամանատարը, իսկ սպարապետը կամ գունդստաբլը գլխավորում էր ամբողջ բանակը¹⁵⁴:

Ս. Բոռնագյանը և Հ. Մանանդյանը ենթադրում են, թե «աղբյուրներում հիշատակված «սպասալար» տերմինը կազմված է արիական կամ իրանական ծագում ունեցող երկու բառից՝ առաջինը՝ ասպ, որը ասպ ձևով գոյություն չունի հայերենում, սակայն ասպ վիճակում մնացել է բազմաթիվ բարդ բառերում: Երկրորդ մասը՝ սալար (Salar) նշանակում է բանակի գորավար»¹⁵⁵:

Կիլիկիայում գոյություն ուներ ևս ռազմական մի պաշտոն, որը կոչվում էր «մարաջախտ»: Ղևոնդ Ալիշանը նշում է, որ «մարաջախտ» բառը ծագում է լատ. Marescalcus, ֆր. Marechal բառից, որը «ըստ բառական նշանակյին չէ հեռի յախոռապետե»¹⁵⁶: Նրա պարտականությունը բանակին ռազմական տեխնիկայով ու պարենով ապահովելն էր, իսկ ճակատամարտի ժամանակ դրոշմ ու զինանշանը կրողն ու սպարապետի անմիջական օգնականներից մեկն էր¹⁵⁷:

Եվրոպական երկրների թագավորական պալատների կապիտանի նման արքունիքում գոյություն ուներ արքունի «կապիտանի» պաշտոնը, որը մարաջախտի օգնականն էր¹⁵⁸: Կապիտանները կամ շևտիները (chevitaines), հատկապես նավահանգիստներում ունեցել են վարչական և ոստիականական, ինչպես նաև դատական իրավունքներ¹⁵⁹:

¹⁵⁴ Հայ ժող. պատմություն, էջ 742:

¹⁵⁵ Ս. Բոռնագյան, էջ 65, Հ. Մանանդյան, էջ 63:

¹⁵⁶ Միսուան, էջ 484:

¹⁵⁷ Նույն տեղում:

¹⁵⁸ Ս. Բոռնագյան, էջ 66:

¹⁵⁹ Նույն տեղում, էջ 83:

Պայլություն

Այս գործակալությունը եղել է ոչ մշտական. այն ստեղծվել, գործել և վերացվել է հենց այն ժամանակ, երբ ստեղծվել ու վերացել են նրան նպաստող պայմանները: Պայլություն գործակալությունը կոչվել է նաև մեկ այլ՝ «խնամակալություն» բառով: Սույն պաշտոնը գոյություն է ունեցել դեռ իշխանական շրջանում: Գործակալը կոչվել է «պայլ»¹⁶⁰: Ըստ Ղևոնդ Ալիշանի՝ «պայլն» անվանվել է նաև «Թագավորահայր», որովհետև «...էր ընդհանուր յանձանձիչ և վարիչ տերութեան իբրև երեսփոխան թագաւորին կամ դաստիարակ նորին.»¹⁶¹: «Պայլ» բառն արևմտյան ծագում ունի, որը համարժեք է «Bayulus, Bailli, Bailo»¹⁶² բառերին: Այս գործակալությունը Հին Հայաստանում անվանվում էր Մարդպետություն, իսկ գործակալին անվանել են Հայր, Հայր Մարդպետ, թագավորի Հայր: Նրա պարտականությունը եղել է արքայի կանանոցի և արքունիքի վերակացությունը, թագավորական ամրությունների և բերդերի պահպանությունը և արքունիքի գանձերի ու կալվածքների վերահսկողությունը¹⁶³:

Խնամակալության գործակալը, այլ կերպ ասած՝ պայլը, կատարել է իր պաշտոնը թագավորի անչափահասության ժամանակ: Շատ հաճախ այս պաշտոնը վստահվում էր երկրի ֆեոդալական խոշորագույն տների ներկայացուցիչներին, ինչպես օրինակ՝ սպարապետին, մարեշալին, սենեշալին...

Հակառակ նրան, որ Բագրատունյաց հարստության ժամանակաշրջանում գործակալությունները ժառանգական բնույթ էին կրում՝ Կիլիկյան Հայաստանում այդ համակարգը չէր գործում. թագավորի կողմից գործակալներ նշանակվում էին առավել կարող իշխաններից: Թագավորից զատ, թագավոր չլինելու դեպքում, թագաժառանգի պայլ կարող էր նշանակել իշխանական խորհուրդը, որի դեպքում

¹⁶⁰ Մխուան, էջ 483:

¹⁶¹ Նույն տեղում:

¹⁶² Նույն տեղում:

¹⁶³ Հ. Մանանդյան, էջ 64:

պայլի դերն ու նշանակությունը մեծանում էր, որովհետև գահին տիրանալու համար երկրում սկսվում էին գահակալական նկրտումներ, և հենց այդ ժամանակ զգացվում էր պայլի կարևորությունը: Նա գլխավորում էր բանակը և անհրաժեշտության դեպքում հնազանդեցնում էր ըմբոստ իշխաններին: Երբեմն պայլություն գործակալության գլուխ են կանգնել նույնիսկ երկու և ավելի իշխաններ, որոնք տեր են կանգնել թագաժառանգին և երկրին¹⁶⁴:

¹⁶⁴ Մխուան, էջ 481-483:

Արքունի քարտուղարություն

Այս գործակալությունը հայտնի է նաև «ջանցլեր»¹⁶⁵ անվամբ: Այն, ըստ Ղևոնդ Ալիշանի, ծագում է լատինական Cancellarius, Chancellor բառից, որը հայտնի է նաև «Ատենադպիր» կամ «Քարտուղար արքունի» անվամբ¹⁶⁶: Ս. Բոռնազյանի կարծիքով «ատենադպիր տիտղոսն ու պաշտոնը գոյություն ունենալու նաև Հին Հայաստանում, սակայն Կիլիկյան թագավորությունում գործող ջանցլերի պաշտոնը նույն բովանդակությունը չունենալով, թեև որոշ կողմերով նման էր բուն Հայաստանի ատենադպիր արքունի քարտուղարությանը»: «Հետևաբար, շարունակում է հեղինակը, - կարելի է հաստատ ասել, որ ջանցլեր տերմինը և նրա բովանդակությունը վերցվել էր ֆրանկ պետություններից»¹⁶⁷:

Ղևոնդ Ալիշանը հաղորդում է, որ այս պաշտոնին ընտրվում էին եկեղեցական դասից. «*յաւէտ յեկեղեցական կարգէ ընտրէր*»¹⁶⁸: Այս պաշտոնի մշտական կրողը Սսի եպիսկոպոսն էր¹⁶⁹, հետևաբար դիվանը գտնվում էր Սսում: Ղևոնդ Ալիշանի հետևյալ տողերից պարզ է դառնում, որ Սսի արքեպիսկոպոսը թագավորի քարտուղարն էր. «*....որոյ ընդ առաջ խարեց Լևոն՝ իւր խնամին և քարտուղարը՝ Հովհաննէս Սոյ արքեպիսկոպոսը*»¹⁷⁰:

Սույն պաշտոնը հանձնվում էր լեզուներ իմացող և գիտելիքներով հարուստ հոգևորականների: Ա. Սուքիասյանի կարծիքով «Կանցլերի պաշտոնում բարձր հոգևորականության ներկայացուցիչ նշանակելը կրկնակի նպաստակ էր հետապնդվում. առաջին, հոգևորականության միջոցով ավելի բարձրացնել թագավորի հեղինակությունը բարոնների միջավայրում՝ երկրի ներսում,

¹⁶⁵ Սիսուան, էջ 481:

¹⁶⁶ Նույն տեղում, էջ 485:

¹⁶⁷ Ս. Բոռնազյան, էջ 70:

¹⁶⁸ Սիսուան, էջ 485:

¹⁶⁹ Ս. Բոռնազյան, էջ 70:

¹⁷⁰ Ի. Չ. Ղևոնդի Ս. Ալիշան, Հուշիկք Հայրենեաց Հայոց, հատոր Ա, Ի սուրբ Ղազար Վենետկոյ, 1869, էջ 116, (այսուհետ՝ Հուշիկք Հայրենեաց):

օտարերկրյա արքունիքի շրջանում և, երկրորդ, կանխել այդ պաշտոնի վերածումը ժառանգական մենաշնորհի»¹⁷¹:

Կանցլերը վարում էր նաև արտաքին գործերը¹⁷², Ղևոնդ Ալիշանը վկայում է, որ նրա մոտ էր պահվում արքունի կնիքը¹⁷³: Նրա ղեկավարությամբ էին կազմվում թագավորի հրամանները, որոնք արքայից բացի, ստորագրում էր կանցլերը: Նրան էին ենթարկվում մեծ թվով գրագիրներ և թագմանիչներ, որոնք ոչ միայն սոսկ թարգմանիչներ էին¹⁷⁴, այլ նաև դիվանագետներ, որոնք բանակցություններ էին վարում օտար պետությունների ներկայացուցիչների հետ¹⁷⁵:

¹⁷¹ Ա. Սուքիասյան, էջ 166:

¹⁷² Ս. Բոռնազյան, էջ 71:

¹⁷³ Մխտուան, էջ 485:

¹⁷⁴ Նույն տեղում:

¹⁷⁵ Ս. Բոռնազյան, էջ 71:

Սեղանապետություն

Այս գործակալությունը վարում էր «սենեշալը» կամ «սենեսկալը», հիշատակվում է նաև «սենեսչալ» անվամբ¹⁷⁶: Ըստ Ղևոնդ Ալիշանի՝ այս բառը ծագում է ֆրանսիական Siniscaleus, Senechal բառից, որը թարգմանվում է «սեղանադիր»¹⁷⁷: Արքունիքում սենեսկալը մեծ հեղինակություն էր վայելում. «նա թագավորի խորհրդականներից մեկն էր, նրա մաժորդոմը (պալատի կառավարիչը) և վստահելի անձը»¹⁷⁸: Ս. Բոռնազյանը կարծում է, որ «Սա համապատասխանում է արևմտաեվրոպական երկրների պալատներում՝ համապատասխան գործակալությունը դեկավարող մեծ դոմեստիկ (grand domestique) տիտղոսին»¹⁷⁹, որը «նաև բարձրագույն հսկողություն էր իրականացնում երկրի բոլոր ամրոցների նկատմամբ»¹⁸⁰: Այնուհետև սենեսկալի ձեռքին է կենտրոնանում վերահսկողությունը արքունիքի գանձերի նկատմամբ, և նա սկսում է վարել երկրի տնտեսությունը: Ըստ Ա. Սուքիասյանի՝ «նա զբաղեցնում էր հնից եկած հազարապետի պաշտոնը»¹⁸¹, այս կարծիքին է նաև Ղևոնդ Ալիշանը. նա Սենեսկալին անվանում է «հազարապետ պալատանն»¹⁸²:

Սենեսկալին են ենթարկվել բազում պաշտոնյաներ, որոնցից արքունի «ջամբուլայն»¹⁸³ էր: Ըստ Ղևոնդ Ալիշանի՝ այս բառը ծագում է լատինական Ciambellanus, Chambelan բառերից, « *որ է Սենեսկալ, կամ հանդերձապետ արքունի, իբրև Զգեցուցանող թագաւորին Արշակունեաց, կամ Պրոտովեստիարն*

¹⁷⁶ Մխումբ, էջ 485:

¹⁷⁷ Նույն տեղում:

¹⁷⁸ Ա. Սուքիասյան, էջ 167:

¹⁷⁹ Ս. Բոռնազյան, էջ 75:

¹⁸⁰ Ա. Սուքիասյան, էջ 166:

¹⁸¹ Նույն տեղում:

¹⁸² Մխումբ, էջ 486:

¹⁸³ Նույն տեղում, էջ 485:

Քիզանդացուց (προτοβεσταριος, Protovestiarius), պահապան նշանաց և զգեստուց նորին»¹⁸⁴:

«Ջամբուլայ» պաշտոնի անվանումը վերցված է լատիներենից, սակայն բովանդակությամբ նման էր Հին Հայաստանի արքունիքում թագավորին ծառայող «սենեկապետի» պաշտոնին¹⁸⁵: Հ. Բարթիկյանը կարծում, թե բյուզանդական պետական համակարգում սենեկապետը գլխավորում էր արքունի պալատը, և այդ պաշտոնը ղեկավարող անձն ուներ «սեբաստոսի» տիտղոս¹⁸⁶: Ա. Սուքիասյանը նույնպես համամիտ է այն կարծիքին, թե «Սենեսկալը կառավարում էր թագավորի «սենյակը» և «արդուզարդը»¹⁸⁷, բացի վերոնշյալից նա կառավարում էր նաև «գանձը», այսինքն՝ թագավորի գանձարանը և վերահսկում էր պալատի ծախսերը, կազմակերպում ընդունելություններ և տոնակատարություններ¹⁸⁸:

Առ ի տեղեկություն ասենք, որ մինչ այստեղ նշված պաշտոնները ղեկավարող անձինք բարձր ավագանու ներկայացուցիչներ էին:

Սենեսկալին էր ենթարկվում նաև արքունիքում ծառայող բողիերը¹⁸⁹ կամ պողիերը¹⁹⁰ և ավագ չաուշը, ովքեր մանր ազնվականներից էին ընտրվում:

Ղևոնդ Ալիշանի տեղեկության համաձայն՝ պողիերը ծագում է Butellarius կամ Buticalarius, Boutiller բառից, որը նշանակում է «Մատռուակ» կամ «Գինեպետ»¹⁹¹: Պողիերը կառավարում էր թագավորական ճաշասեղանը և ըմպելիքները¹⁹²:

Ավագ չաուշը նշանակում է «Նվիրապետ կամ Սուրհանդակապետ»¹⁹³, ըստ Ղևոնդ Ալիշանի՝ այս բառը ներմուծվել է թուրքերենից և կիրառվել է նաև

¹⁸⁴ Միսուան, էջ 486:

¹⁸⁵ Մ. Բոռնագյան, էջ 74:

¹⁸⁶ Հ. Բարթիկյան, էջ 294:

¹⁸⁷ Ա. Սուքիասյան, էջ 166:

¹⁸⁸ Միսուան, էջ 486:

¹⁸⁹ Նույն տեղում:

¹⁹⁰ Միսուան, էջ 486:

¹⁹¹ Ա. Սուքիասյան, էջ 166:

¹⁹² Միսուան, էջ 486:

¹⁹³ Նույն տեղում:

բյուզանդական արքունիքում. «կայսերաց Բիզանդիոնի նոյնպէս կոչելով, *ο μεγας τζαο'υσιοσ...առ որս' հրամանատար էր սա երկաթաբիր և սակրակիր սպասավորաց*»¹⁹⁴, այսինքն՝ ավագ չաուշը միաժամանակ թագավորի պալատի ապահովության պատասխանատուն էր՝ զինված սպասավորների պետը: Նա, ինչպէս արդէն նշեցինք, անմիջապէս ենթարկվում էր սենեսկալին:

¹⁹⁴ Միսուան, էջ 486:

Մաքսապետություն

Կիլիկիայի ազդեցիկ գործակալություններից էր նաև մաքսապետությունը, որը ղեկավարում էր երկրի ֆինանսական համակարգը: Այս գործակալության պաշտոնակատարն անվանվում էր «Պոռքսիմոս (Proximus)»¹⁹⁵, սույն բառը ծագում է հունարենից, «բայց դրան բոլորովին այլ նշանակություն էին տվել», - նշում է Ա. Սուքիասյանը¹⁹⁶: Այս պաշտոնը հանդիպում ենք Մատթեոս Ուռհայեցու մոտ ռազմական առաջադրանք կատարելիս. «*տայր զգօրս քաղաքին ի Պոռքսիմոսն իւր և պատուեր տայր զկնի՝ վասն կորստեան Պեղտին*»¹⁹⁷: Բյուզանդական իրականությունում «պոռքսիմոսի» պաշտոնը հանդիպում ենք իբրև թագավորական գրասենյակի պետի պաշտոնում¹⁹⁸, իսկ Կիլիկյան Հայաստանում նա զբաղվում էր հարկերով, դրամի շրջանառությամբ, այսինքն՝ ֆինանսական գերատեսչության պաշտոնի ղեկավարն էր:

Երկրում արհեստագործությունից, առևտրից, հարկերից, մաքսերից հավաքված հսկայական գումարն ուղղորդում էր մաքսապետություն գործակալությունը: «Մաքսերից ստացվող եկամուտը այն գլխավոր աղբյուրներից մեկն էր, որոնցով պահվում էր պետությունը և ապահովվում էին ռազմական ծախսերը»¹⁹⁹:

Ղևոնդ Ալիշանը վկայում է Այասի՝ ծովային հարուստ նավահանգստի «պոռքսիմոսի» մասին և ավելացնում, որ նրա իշխանության տակ էին «Գլխաւորն Բաժտան Այասու և այլ ստորակարգ պաշտոնեայք»²⁰⁰: Մեզ հայտնի է նաև մաքսապետի իշխանության տակ գտնվող «(*Proto notarius Duanae Seuteorum*)

¹⁹⁵ Միսուան, էջ 486:

¹⁹⁶ Ա. Սուքիասյան, էջ 168:

¹⁹⁷ Մ. Ուռհայեցի, էջ 157:

¹⁹⁸ Ա. Սուքիասյան, էջ 168:

¹⁹⁹ Հայ ժող. պատմություն, էջ 745:

²⁰⁰ Միսուան, էջ 486:

Նոտարապետ գաղտնեաց կամ Դիւանաց մաքսին»²⁰¹ պաշտոնները, որոնց Ղևոնդ Ալիշանն անվանում է «նաւահանգստի վերակացուներ»²⁰²:

²⁰¹ Մխուան, էջ 486:

²⁰² Նույն տեղում:

Արքունիքում գործող պաշտոնները

Կլիկիայի պետության արքունիքում գոյություն ունեին բազմաթիվ պաշտոններ, որոնց և պաշտոնակատար անձանց պարտականությունների մասին, ինչպես արդեն նշել ենք, հաղորդում են Սմբատ Սպարապետն ու Մխիթար Գոշն իրենց «Դատաստանագրքերում»:

Սմբատ Սպարապետը հիշատակում է. «Յառաջ էլենտիարք (սիլենտիարք) են»²⁰³, իսկ Մխիթար Գոշի մոտ վերոնշյալին վերաբերող հոդվածում անվանվում է «եղեն՝ Դիարք»²⁰⁴: Այս պաշտոնի անվանման վերաբերյալ Վ. Բաստամյանը նշում է, որ «...բառը զանազան կերպով է դրած զանազան օրինակներում, զոր օրինակ N438, N439, կարապ, և մեր օրինակ՝ եղեն դիարք, N490 և կանոնագ. N761՝ էլենդիարք, և այլն»²⁰⁵: Սույն պաշտոնն ունեցող անձանց պարտականությունը թագավորին տալն է այն, ինչ ինքը՝ թագավորը, կխնդրի. «...և գործ է նոցա տանել յառաջ զթագաւորոդսն և զայլսն, զոր խնդրէ արքայն»²⁰⁶:

Դիրքով երկրորդը «վեստիտորայն»²⁰⁷ է, սրանք արքայի թագադիրներն են: Ըստ Վ. Բաստամյանցի՝ «Վեստիտոր» (vestitor) լատինական բառ է և բառացի նշանակում է դերձակ, հանդերձապետ, հանդերձ հագցնող կամ դնող, փոխաբերական կարող է նշանակել «պսակակալ»²⁰⁸ կամ «պսակակապ»²⁰⁹, «ինչպես ասում է մեր կանոնը, այսինքն՝ թագ դնող, թագը գլխին հագցնող»²¹⁰:

²⁰³ Դատաստանագիրք, էջ 41:

²⁰⁴ Մխիթար Գոշ, էջ 263:

²⁰⁵ Նույն տեղում, էջ 261:

²⁰⁶ Նույն տեղում, էջ 262:

²⁰⁷ Դատաստանագիրք, էջ 41:

²⁰⁸ Մխիթար Գոշ, էջ 262:

²⁰⁹ Դատաստանագիրք, էջ 41:

²¹⁰ Մխիթար Գոշ, էջ 262:

Երրորդը «կանդիտորայն»²¹¹ կամ «կանտիտորայն»²¹² է: Ըստ Սմբատ Սպարապետի և Մխիթար Գոշի հաղորդումներին՝ «կանդիտորան» թագավորի առջևից սուրբ խաչը բռնողներն էին: Վ. Բաստամյանցի մեկնաբանման համաձայն՝ սա «...լատինական Candidatus բառից է, որ բացի ուրիշ շատ նշանակություններից նշանակում է և արքունի պաշտոնեայ, որին հանձնվում էր կարդալ Սենաթի մեջ թագաւորի հրովարտակը, ճառը, նամակը և այլն»²¹³:

Չորրորդը՝ «պրօքստորայն է»²¹⁴, իսկ Մխիթար Գոշի մոտ՝ «պռօքսետորայն»²¹⁵ ձևով ենք հանդիպում: Սրանց պարտականությունը թագավորի դագաղը տանելն է. «երբ թագաւորն մեռանի, նա գղազաղսն շալակեն»²¹⁶: Ըստ Վ. Բաստամյանցի՝ սա լատիներեն բառ է և ծագում է Portitor բառից, որը նշանակում է կրել, տանել²¹⁷:

Հիգերոդը՝ «եսկուպիտորայն է»²¹⁸, Մխիթար Գոշի մոտ սույն բառին հանդիպում ենք «եսկուպօտիբայն»²¹⁹ ձևով, որոնք թագավորի ասպարն ու վահանը կրողներն էին, ինչպես և հաղորդում է կանոնագիրը. «ասպարս և վահանս կմբրաւորս շալակեն»²²⁰:

Վեցերորդը՝ «ստրատորոսն են»²²¹ կամ «Ստրատորք»²²², սրանք թագավորի ձին թամբողներն էին, ինչպես նաև օգնում էին թագավորի հեծնել այն: Վ. Բաստամյանցի կարծիքով Strator լատինական բառ է և նշանակում է «թագաւորի ախոռապետ»²²³:

²¹¹ Դատաստանագիրք, էջ 41:

²¹² Մխիթար Գոշ, էջ 263:

²¹³ Մխիթար Գոշ, էջ 263:

²¹⁴ Դատաստանագիրք, էջ 41:

²¹⁵ Մխիթար Գոշ, էջ 263:

²¹⁶ Դատաստանագիրք, էջ 41:

²¹⁷ Մխիթար Գոշ, էջ 263:

²¹⁸ Դատաստանագիրք, էջ 41:

²¹⁹ Մխիթար Գոշ, էջ 263:

²²⁰ Դատաստանագիրք, էջ 41:

²²¹ Նույն տեղում:

²²² Մխիթար Գոշ, էջ 265:

²²³ Նույն տեղում:

Յոթերորդը՝ «սքոլարքն»²²⁴ կամ «սքոդարքն»²²⁵ են, որոնց պարտականությունը նշաններն ու դրոշակները կրելն էր²²⁶:

Ութերորդը՝ «Դեկանիոն են»²²⁷, որը լատինական Decanus բառից է ծագում և «նշանակում է տասնապետ, իբրև զինվորական աստիճան»²²⁸: Սրանք թագավորի թիկնապահներն են. այս կարծիքին մենք հանգում ենք Սմբատ Սպարապետի հետևյալ տողերից. «առաջի թագաւորին երթան և զանբոխն ի բաց վարեն»²²⁹: Սրանց մասին խոսում է 1211 թ. Կիլիկիա ճանապարհորդած Հաննովերի Հիլտեսիայմ քաղաքի կանոնիկոս վարդապետ Վիլլեպրանտը թագավորի շքախմբի նկարագրության ժամանակ. «ասոնց խումբին միջէն կու վազվոտէին բազմութիւն զինակիր փայեկաց, իբրև անձնապահք թագավորին»²³⁰:

Իններորդը՝ «պահնորդներն են.... սոքա կիւոսօրք կոչին»²³¹: Վ. Բաստամյանցի համաձայն «Կիւոսօր կամ կուոսօր լատինական բառից է cursor, որ նշանակում է սուրհանդակ, պատգամավոր, շաթիր»²³², և Սմբատ Սպարապետի տեղեկության համաձայն՝ սրանք պալատի պահապաններն են «....ի դուրս կենան բոլոր և պահեն պաղասն»²³³:

Վերոնշյալ ծառայողներից բացի՝ արքունիքում գոյություն ունեին մի շարք պաշտոններ, որոնց մասին հաղորդում են Սմբատ Գունդաստաբլն ու Մխիթար Գոշը, վերջինս ավելի մանրամասն է ցույց տալիս այդ պաշտոններն ու նրանց պարտականությունները: Հ. Բարթիկյանը դրանց մասին կատարել է ուսումնասիրություն, և մենք, հետևելով նրան, բերում ենք այդ պաշտոնների անվանումները.

²²⁴ Դատաստանագիրք, էջ 42:

²²⁵ Մխիթար Գոշ, էջ 266:

²²⁶ Նույն տեղում:

²²⁷ Դատաստանագիրք, էջ 42:

²²⁸ Մխիթար Գոշ, էջ 266:

²²⁹ Դատաստանագիրք, էջ 42:

²³⁰ Հուշիկք Հայրենեաց, էջ 118:

²³¹ Նույն տեղում:

²³² Մխիթար Գոշ, էջ 267:

²³³ Դատաստանագիրք, էջ 42:

Վ. Բաստամյանցի կարծրքով 4-րդը «փոփոխությունն է լատինական Balneator բառի, որ նշանակում է բաղնիքայան, բաղնիքի մեջ լվացող սպասավոր»²⁴¹:

5-րդը ծագում է «լատինական Triclinarius բառից, որ նշանակում է սպասավոր ճաշի սեղանի ժամանակ»²⁴², սրանց Սմբատ Սպարապետն անվանում է «հացապաններ»²⁴³:

6-րդը Վ. Բաստամյանցի կարծիքով ծագում է «թերևս լատինական Obsecandator բառից, որը նշանակում է ծառայ, սպասավոր թագավորական պալատի մեջ»²⁴⁴, սրանք արքայի ձեռքին ջուր լցնողներ են. «որք արկանեն ձեռաց ջուր արքային»²⁴⁵, իսկ Սմբատ Գունդստաբլը ջուր լցնողներին անվանում է «ֆառաշներ»²⁴⁶:

Մնացած պաշտոնակատարները հոգևորականներ և եկեղեցու սպասավորներ էին, որովհետև նրանց գործունեությունը կապված էր եկեղեցու հետ:

7-րդը արքայի եկեղեցու սպասավորներն են²⁴⁷:

8-րդը սաղմոս ասացներն են²⁴⁸:

9-րդը, ըստ Հայկազյան բառարանի, ծագում է հունարեն *Επουδαιοι*, լատինական *Studiosi* բառից, որը բառացի նշանակում է «*փոյթք, ժիրք, որպես զճգնազգեաց միանձունք և վանականք*»²⁴⁹, իսկ Վ. Բաստամյանցը բնութագրում է, որպես քաղաքի հոգևորականներ²⁵⁰:

²⁴¹ Մխիթար Գոշ, էջ 268:

²⁴² Մխիթար Գոշ, էջ 268:

²⁴³ Դատաստանագիրք, էջ 42:

²⁴⁴ Մխիթար Գոշ, էջ 268:

²⁴⁵ Նույն տեղում:

²⁴⁶ Դատաստանագիրք, էջ 42:

²⁴⁷ Մխիթար Գոշ, էջ 268:

²⁴⁸ Նույն տեղում, էջ 269:

²⁴⁹ Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, հատ. Բ, Երևանի Համալսարանի հրատ., Երևան, 1981. էջ 739:

²⁵⁰ Մխիթար Գոշ, էջ 269:

10-րդը, ըստ Հայկազյան բառարանի, ծագում է հունական Μοναζωσ, լատինական Monachus բառից, որը թարգմանվում է «*մենակեաց, միայնակեաց, կրօնավոր, արեղա*»²⁵¹, Վ. Բաստամյանցը պարզապես նշում է, որ սրանք նույնպես հոգևորականներ են²⁵²:

11-րդը, ըստ Վ. Բաստամյանցի, վարդապետություն գրողներ են²⁵³, սակայն Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» բնագրում հանդիպում ենք այսպես՝ «*զարտաքնոյն աստուածաբանութիւնս ուսանին և եկեղեցականօքն վարժին*»²⁵⁴: Ջարմանալի է, որ Վ. Բաստամյանցը, լինելով վարդապետ, այդպես է կարծում, որովհետև դոմետիկոսները հանդես են եկել ոչ թե վարդապետություն գրողներ, այլ որպես՝ քարոզիչներ, եկեղեցու վարդապետությունը սովորեցնողներ:

Ղևոնդ Ալիշանը խոսում է ևս մի պաշտոնյայի՝ «Պատիկոսի» մասին: Ըստ նրա բառը ծագում է հուն. «Παροιχοι, Paricus» բառից, որը նշանակում է այգի: Ըստ հեղինակի նրանք զբաղվում էին հողագործությամբ և այգեգործությամբ²⁵⁵:

²⁵¹ Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, էջ 297:

²⁵² Մխիթար Գոշ, էջ 269:

²⁵³ Նույն տեղում:

²⁵⁴ Նույն տեղում:

²⁵⁵ Մխուան, էջ 481:

Ինքնակառավարման մարմինները

Ենթադրում ենք, որ Կիլիկիայի հայկական պետությունը, լինելով ֆեոդալական օրենքներով կառավարվող երկիր, ուներ ներքին ինքնակառավարման համակարգ, սակայն դրանց մասին մեզ հասած տեղեկությունները բավական սակավ են:

«*Եթե ի գաւառն կամ երկիր իշխանի որ ընդ թագաւորի հնազանդութեամբ լինի*»²⁵⁶. հետևյալ տողերից կոտակում ենք, որ Կիլիկյան Հայաստանը բաժանված է եղել գավառների կամ երկրների: Սմբատ Սպարապետի հավաստման Կիլիկիայի իշխաններն իրենց գյուղերի, քաղաքների, բերդերի, դաշտերի և լեռների վրա դրել են հատուկ նշաններ և արձանագրություններ. «*Զսինոռ լերանց և դաշտաց քաղքնոյ և բերդերոյ և գետոյ դնել պիտի նշանով և գրով ամրացնել*»²⁵⁷: Սույն միտքն նույնպես ապացուցում է, որ Կիլիկիան պետք է բաժանված լիներ գավառների: Բացի վերոնշյալից՝ ասենք, որ Սամուել Անեցին ուղղակիորեն վկայում է, կիլիկյան նահանգներից մեկի մասին, սակայն անունը չի նշում «*եղեալ ի ծովակողմի Տորոսի տիրեաց նահանգին այնորիկ*»²⁵⁸: Թե քանիսն են եղել Կիլիկիայի թագավորության գավառները, մեզ ստույգ հայտնի չէ, որովհետև դրանց մասին վկայող ոչ մի փաստաթուղթ չի հասել, ուղղակի այդ մասին գիտնականների կարծիքները տարբերվում են: Ղևոնդ Ալիշանն իր «Միսուան» աշխատության մեջ խոսում է Կիլիկիայի 30 գավառի ու մեկ շրջանի մասին, ինչին կողմնակից են նաև Ա. Սուքիասյանը և Գ. Միքաելյանը²⁵⁹: Սակայն նրանց համամիտ չէ Ս. Բոռնագյանը: Նա, հիմնվելով Լևոն Բ թագավորի թագադրության

²⁵⁶ Դատաստանագիրք, էջ 19:

²⁵⁷ Նույն տեղում, էջ 80:

²⁵⁸ Սամուել Անեցի, էջ 214:

²⁵⁹ Ա. Սուքիասյան, էջ 168, Микаелян, ст. 18.

արարողության ժամանակ ներկա 45 խոշոր իշխանների թվաքանակի վրա, ենթադրում է, որ Կիլիկիան բաժանված է եղել հենց 45 շրջանի ու գավառի²⁶⁰:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ վարչական միավոր համարվել է գավառը կամ երկիրը, կամ պարոնությունը²⁶¹: Կառավարման առավել խոշոր միավոր է համարվել «աշխարհը» և «կոմսությունը», որի կառավարիչը կոչվել է «կոմս» կամ «գունդ»: Յուրաքանչյուր գավառ կամ շրջան ունեցել է իր իշխանանիստ կենտրոնը: Ըստ Ա. Սուքիասյանի՝ «Գավառների մի մասը, ինչպես նաև խոշոր քաղաքները, մտնում էին դոմենի կազմի մեջ, մյուս մասը կազմում էին ֆեոդալների՝ թագավորի վասալների տիրույթները»²⁶²: Կիլիկիայում գոյություն ունեին գավառներ ու քաղաքներ, որոնց կառավարչը նշանակվում էր անձամբ թագավորի կողմից²⁶³, իսկ մնացյալ տիրույթները, որոնք գտնվում էին բարոնների իշխանության տակ, կառավարվում էին վերջիններիս կողմից, այսինքն՝ նրանք այդ տիրույթներում և՛ կառավարիչներ, և՛ սեփականատերեր էին: Ա. Սուքիասյանի կարծիքով, Կիլիկիայի յուրաքանչյուր գավառ կազմված էր բազմաթիվ գյուղական համայնքներից, որոնք միաժամանակ եկեղեցական ծխեր էին, իսկ եկեղեցական ծուխը և համայնքը ձուլվում էին մեկ ինքնակառավարվող միավորի մեջ, ինչպես այդ գոյություն ուներ միջնադարյան անգլիական գյուղում²⁶⁴:

Տեղական կառավարման միավոր էին հանդիսանում նաև քաղաքները: Ա. Բոռնագյանը նշում է, որ «Կիլիկիայի քաղաքները մտնում էին թագավորական դոմենի մեջ և անմիջականորեն ենթարկվում էին արքունիքին՝ կառավարման կենտրոնական ապարատին»²⁶⁵: Քաղաքներում թագավորի կողմից նշանակված պաշտոնակատար ներկայացուցիչները դրանք շնտիները կամ կապիտաններն

²⁶⁰ Ա. Բոռնագյան, 82:

²⁶¹ Դատաստանագիրք, էջք 18, 19, 68:

²⁶² Ա. Սուքիասյան, էջ 168:

²⁶³ Միսուան, էջ 370:

²⁶⁴ Ա. Սուքիասյան, էջ 169:

²⁶⁵ Ա. Բոռնագյան, էջ 83:

Էին: Ինչպես արդեն նախորդիվ նշել ենք, կապիտանները նավահանգիստներում ունեցել են վարչական և ոստիկանական լիազորություններ²⁶⁶:

Քաղաքներում գոյություն ունեցող պաշտոններից էր նաև «ձեռներեցը»²⁶⁷, «մուխթասիբը» և «դուկը»²⁶⁸: Համապատասխան հոդվածում կարդում ենք, որ վերոնշյալ անձինք հսկում էին քաղաքների շուկաներում չափի ու կշռի կարգավորմանը, գանձում էին մաքսեր ու տուրքեր, ինչպես նաև կամուրջների, ճանապարհների ու քաղաքի գլխավոր մուտքերում՝ կապալը: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ Ա. Սուքիասյանը փոխադրվող ապրանքներից մաքսեր գանձողներին անվանում է «Քափուչիներ», իսկ չափ ու կշիռը վերահսկողներին՝ «կրպիչներ»²⁶⁹:

«Դատաստանագրքի» ՃԺԷ (119) հոդվածում հիշվում է նաև քաղաքի մեկ այլ պաշտոնյայի՝ «երեսփոխանի» մասին, որը կատարում էր դատավորի պարտականություն. *«որ ի վերայ մեղանացն խրատել տայ կամ խոռել, կամ մեռցնել»*²⁷⁰: Կիլիկյան քաղաքներում կառավարության պաշտոնյաներից բացի՝ գոյություն ունեին նաև ինքնավարության մարմիններ, այլ կերպ ասած՝ քաղաքացիների դասային խորհուրդ: Այս խորհուրդի ղեկավարն էր քաղաքագլուխը²⁷¹: Դրա հետ միասին քաղաքային բնակչության առանձին խավեր՝ վաճառականներ, արհեստավորներ ունեին դասային ինքնավարության իրենց մարմինները՝ գիլդիաներն ու համքարությունները²⁷²:

Ղեկավար մարմիններ գոյություն ունեին նաև գուղերում, որոնք նույնպես պատկանում էին պարոններին: Սմբատ Մպարապետը նշում է, եթե ինչ-որ ֆեոդալ գյուղ է կառուցում իր հողերի վրա, ապա այդ գյուղն իրենն է, իսկ եթե ավերված գյուղը լցվի մարդկանցով և այն շենանա, ապա այդ գյուղը պատկանում է նախկին

²⁶⁶ Ա. Սուքիասյան, էջ 169:

²⁶⁷ Թուրթ առ Լևոն, էջ 213:

²⁶⁸ Դատաստանագիրք, էջ 63:

²⁶⁹ Ա. Սուքիասյան, էջ 168:

²⁷⁰ Դատաստանագիրք, էջ 63:

²⁷¹ Ա. Սուքիասյան, էջ 169:

²⁷² Նույն տեղում:

տիրոջը, որովհետև այդ հողերի տերն ինքն է²⁷³: Այսպիսով՝ գյուղի գլխավոր ղեկավար մարմինը հանդիսանում էր ֆեոդալը, սակայն գյուղերում գոյություն ունեին համայնքներ, որոնք ունեին իրենց ղեկավար մարմինները, դա ավագների խորհուրդն էր, որը նրա անդամներց ավագագույնի գլխավորությամբ կազմակերպում էր գյուղացիների վասալական պարտականությունների իրականացումը²⁷⁴:

²⁷³ Դատաստանագիրք, էջ 72:

²⁷⁴ Ա.Սուքիասյան, էջ 170:

Բանակը

Ինչպես գիտենք Կիլիկիայի հայկական թագավորությունը գրեթե մշտապես եղել է արտաքին թշնամիների սպառնալիքի ներքո, ուստի նրա ապահովության խիստ անհրաժեշտ գործոններից մեկը կանոնավոր, զորեղ բանակ ստեղծելն էր²⁷⁵: Կարելի է ասել, որ Կիլիկիայում եղել է մշտական և ուժեղ պետական բանակ: Մշտական զինված ուժեր են պահել նաև կիլիկիայի հայ իշխանները, հատկապես՝ սահմանամերձ շրջանների բերդատերերն ու սահմանապահ իշխանները²⁷⁶: Որ հայ իշխաններն ունեցել են զինված ուժեր, վկայում է Կիրակոս Գանձակեցին. նա հաղորդում է, որ թագավորի թագադրության արարողության ժամանակ ներկա հայ իշխաններից ոմանք եկել էին իրենց զորքերով. «...եղև ժողով բազմութեան հոյժ՝ զօրապետաց և զօրաց»²⁷⁷: Բարոններն իրենց զորքերը դնում էին իշխանաց իշխանի տրամադրության տակ՝ կովելու արտաքին թշնամիների դեմ²⁷⁸: Այս ուժերը, մտնելով թագավորական բանակի մեջ, կազմում էին «Հայոց այրուձին»: Սրանք, ըստ Ս. Բոռնազյանի, անվանվում էին ձիավորներ և շատ կողմերով նման էին ասպետներին²⁷⁹:

Ա. Սուքիասյանը նշում է, որ «երկրի ներսում զինված ուժերը ֆեոդալներին հարկավոր էին ոչ միայն իրենց գլխավոր ֆունկցիան կատարելու՝ գյուղացիների ու արհեստավորների դիմադրությունը ճնշելու, այլև Կիլիկիայում ապրող հույների և իսաչակիրների անջատողական ձգտումները վերացնելու համար»²⁸⁰: Մենք համամիտ չենք Ա. Սուքիասյանի վերոնշյալ մտքի հետ, որ զինված ուժերի գլխավոր ֆունկցիան գյուղացիների և արհեստավորների դիմադրությունը ճնշելն

²⁷⁵ Հայ ժող. պատմություն, էջ 753:

²⁷⁶ Ս. Բոռնազյան, էջ 95:

²⁷⁷ Կիրակոս Գանձակեցի, 150:

²⁷⁸ Սամուել Անեցի, էջ 116:

²⁷⁹ Ս. Բոռնազյան, էջ 96: Ասպետների մասին կխոսենք հետո:

²⁸⁰ Ա. Սուքիասյան, էջ 173:

էր, որովհետև բանակը հիմնականում կատարում էր պաշտպանական ֆունկցիա օտարների հարձակումներից:

Կիլիկիան գրեթե միշտ պատերազմում էր թշնամիների դեմ, և հենց դրա պատճառով զինվորականները դարձել էին երկրի ազդեցիկ խավը:

Թշնամական հարձակումները դրդված սահմանամերձ վայրերում հայ թագավորները կառուցել էին պաշտպանական ամրություններ և բերդեր, որոնց կառուցումը մեծ թափ ստացավ Լևոն Բ թագավորի օրոք: Չնայած որ Կիլիկիայի բերդերն անառիկ էին՝ այնուամենայնիվ դրանց մեջ պահվում էին բերդապահ կայազորներ, որոնք մշտապես պետք է լինեին մարտական պատրաստ վիճակում:

Դեպի Կիլիկիա ծովից հարձակումը կանխելու համար նավահանգիստներում կառուցվել էին ամրոցներ, հատկապես հիշատակելի են Այասի, Մեգաբուսի, Կոռիկոսի ծովային բերդերը²⁸¹:

Երկրի բոլոր զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարը թագավորն էր, իսկ զորքերի գլխավոր հրամանատարը՝ սպարապետը (գունդստաբլ): Բանակի սպառազինումն ու մատակարարումն իրականացնում էր մարաջախտը (մարշալը), որը սպարապետի օգնականն էր: Մյուս օգնականը սպասալարն էր՝ հեծելազորի հրամանատարը: Բանակի զինվորական մյուս աստիճանների մասին մեզ տեղեկություն է հաղորդում Կիլիկիայում կիրառվող «Զինվորաց օրենսգիրքը», որը թարգմանել է Ն. Լամբրոնացին²⁸²:

Ինչպես արդեն նշել ենք բանակը համալրվում էր, հիմնականում, ազնվականներից, այսինքն՝ նրանց զինված ուժերի միավորմամբ, ինչպես նաև այն անձանցից, ովքեր որոշակի ռազմական պատրաստություն են անցել և «ձիավորի» կամ «ասպետի» կոչում ստացել²⁸³: Բանակում գոյություն ունեին հրամանատարական աստիճաններ՝ հնգապետներ, տասնապետներ, հարյուրապետներ, հազարապետներ: «Օրենսգիրքը» սրանց բոլորի նախագլուխ է

²⁸¹ Միտուան, էջ 357, 353, 331:

²⁸² Ա. Բոգոյան, էջ 4:

²⁸³ Ա. Սուքիասյան, էջ 174:

համարում «կոմս կամ տրիբուն»-ին²⁸⁴, բացի սրանցից՝ բանակում հիշվում է նաև «Էքսարխաուսի» պաշտոնի մասին. «*էքսարխաուս ուր երթայցեն և գաւրքն, որ ընդ նոսա*»²⁸⁵: Օրենսգրքից տեղեկանում ենք նաև, որ բանակը բաժանված է եղել գնդերի, իսկ գնդերը՝ դասերի²⁸⁶:

Ս. Բռնագյանը կարծում է, որ «խաչակիր ասպետների օրինակով սահմանվել էր «ձիավորի» աստիճան, որին հասնելու համար զինվորականը պետք է հրապարակայնորեն քննություն հանձներ ձիավարությունից, նիզակի գործածությունից, նետաձգությունից և ասպետ դառնալու համար անհրաժեշտ բոլոր գիտելիքներից և ունակություններից և ապա հատուկ «ձիավորեցման» ծիսակատարությունից հետո ստանար ձիավորի, ձիավարժի կամ ասպետի կոչում»²⁸⁷: Ղ. Ալիշանը նշում է, որ ձիավորի կամ ասպետի աստիճան ստանալու համար անձը նվազագույնը պետք է 15 տարեկան լիներ²⁸⁸: Սույնի վերաբերյալ ժխտական կարծիքն է արտահայտում Ա. Գալստյանն իր «Հայ ասպետության հարցի շուրջը» հոդվածում²⁸⁹: Նա գրում է, որ «արևմտաեվրոպական ֆեոդալների՝ արևելքում ստեղծած կոմսությունների ազդեցության տակ որոշ ռազմավարչական տերմիններ՝ «պարոն», «գունդստաբլ», «կանցլեր», «մարաջախտ» և այլն մտան Կիլիկյան հայկական թագավորության մեջ, բայց «ասպետ», «ասպետություն» հասկացողությունները մուտք չգործեցին»²⁹⁰: Գիտությունների դոկտորն ավելացնում է, որ «ֆրանսերեն «chevalier» բառը կամայականորեն թարգմանված է «ասպետ», որը ճիշտ չէ»²⁹¹: Մենք համաձայն չենք Ա. Գալստյանի վերոնշյալ մտքի հետ, որովհետև «chevalier», կամ ռուսական «рыцарь» բառերը լայն հասկացողություններ են: Դրա մասին Ս. Բռնագյանը գրում է, որ «ասպետությունը

²⁸⁴ Ա. Բոգոյան, էջ 12:

²⁸⁵ Նույն տեղում, էջ 18:

²⁸⁶ Նույն տեղում, էջ 22:

²⁸⁷ Ս. Բռնագյան, էջ 99:

²⁸⁸ Միսուան, էջ 486:

²⁸⁹ Ա. Գալստյան, Հայ ասպետության հարցի շուրջը, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1968, N 1, էջ 201, (այսուհետ՝ Բանբեր Հայաստանի արխիվների):

²⁹⁰ Նույն տեղում, էջ 200:

²⁹¹ Նույն տեղում, էջ 201:

միջնադարում հանդես է եկել 3 ասպեկտով. ա) ֆեոդալական հողատիրության մի ձև, որպես մանր հողատիրություն բ) անձնական արժանիք կամ հատկություն գ) վարվելաձևի մի համալիր սիստեմ»²⁹²: Մարի-Աննա Շեվալիեն նույնպես նշում է, որ ասպետները մանր ազնվականներ էին, ովքեր իրենց հարստությունը նվիրում էին ասպետական օրդենին, իսկ դրանք կիլիկիայի սահմաններից ներս թափանցեցին, հատկապես, խաչակրաց արշավանքների ժամանակ²⁹³: Կոստանդին իշխանի դաշնագիրը նույնպես վկայում է ասպետների գոյության մասին: Ըստ այդ դաշնագրի՝ Տևոնյան ասպետներն անվանում են ձիավորներ «...մեծահարկի ձիավորացն Սիր Կոստանդին, Սիր...»²⁹⁴:

Ղ. Ալիշանը կարծում է, որ հայ ձիավորները կրում էին «...խաչ կարմիր՝ գպատկեր սրբոյն Վլասայ ի միջին ունելով զգեստ՝ ասուեայ սպիտակ»²⁹⁵, իսկ գերմանացի հեղինակ Շոնեբեկի կարծիքով, հայ ձիավորը կրում էր կապույտ զգեստ՝ ոսկեղեն խաչով և «Հայկական այրուձիու» նշանով²⁹⁶: Ղևոնդ Ալիշանը նշում է, որ այդպիսի պատկեր մեր հայկական աղբյուրներում գոյություն չունեն և ասպետության մասին հնագույն տեղեկությունը պատկանում են XVII-XVIII դարերին²⁹⁷: Այստեղ Ղևոնդ Ալիշանը սխալվում է, որովհետև կիլիկյան ժամանակաշրջանի հայկական աղբյուրներում տեղեկություններ կան ասպետների մասին, սակայն դրանք սակավ են: Մարի-Աննա Շեվալիեն նշում է, որ «հիշատակարանների հեղինակները կամ գրիչները անուշադրության են մատնում ասպետական միաբանությունները, նույնիսկ այն դեպքում, երբ հիշատակում են դրանց առնչվող իրադարձությունների մասին, երբեմն պատահում է, որ նրանք անտեսում են դրանք այն դեպքում, երբ նրանց դերը կամ

²⁹² Մ. Բոռնագյան, էջ 101:

²⁹³ Մարի Աննա Շեվալիե, Կրոնա-ասպետական միաբանությունների ընկալումը՝ Արևելքի քրիստոնյաների (հայերի և ասորիների) կողմից XII դ սկիզբ – XIV դ սկիզբ, «Նիկողայոս Մառ», Երևան, 2005, էջ 81-82: (Այսուհետ՝ Մարի-Աննա Շեվալիե):

²⁹⁴ Միսուան, էջ 210:

²⁹⁵ Նույն տեղում, էջ 487:

²⁹⁶ Մ. Բոռնագյան, էջ 110:

²⁹⁷ Միսուան, էջ 487:

ներկայությունն անժխտելի է»²⁹⁸: Այնուամենայնիվ, հայ ասպետների դասի առաջացման պատճառ կարող էին լինել նաև խաչակրաց արշավանքները²⁹⁹:

Կիլիկիայի հայկական բանակի թվաքանակը միշտ տատանվել է պատերազմի ժամանակ այն հասնում էր 80.000-ից մինչև 100.000 զինվորի, իսկ խաղաղ ժամանակ դրա քանակը կրճատվում էր³⁰⁰: Հայտնի է, որ XIII դարի երկրորդ կեսից սկսած՝ Կիլիկիայի հայկական պետությունը պահում էր մշտական վարձու բանակ, որը բաղկացած էր 12.000 հեծյալից և 50.000 հետևակ զինվորից: Մենք արդեն նշել ենք, որ բանակի զինվորները ստանում էին թոշակ կամ ռոճիկ, ինչպես նաև բաժին՝ ռազմավարից: Թոշակի մասին Ապուլֆետ արաբ պատմիչը վկայում է, որ հայկական բանակում ձիավորի ռոճիկը ամսական կազմում էր 12 ոսկի, իսկ հետևակի զինվորինը՝ 3 ոսկի³⁰¹: Ռազմավարի մասին վկայում է Սմբատ Սպարապետը, թե արծաթը, արծաթյա կտավը և պրիսմեն իշխաններին է պատկանում, պղնձյա, երկաթյա իրեր և բրդեղենն ու բամբակեղենը՝ զորքին, իսկ ոսկին և ոսկյա կտավը՝ թագավորին³⁰²:

Կիլիկյան բանակում գոյություն են ունեցել աղեղնավորների, չարխողների, սակրավորների, երկաայր կացիններով զինվածների մասնագիտացված ջոկատներ³⁰³, բանակն ուներ նաև զինվորական բժիշկներ, բեռնակիրներ և մատակարարող անձնակազմ³⁰⁴: Կիլիկյան բանակի սպառազինությունը համապատասխանում էր տվյալ ժամանակաշրջանի զենքին ու տեխնիկային (սուր, նիզակ, նետ ու աղեղ, վահան, նն): Պատերազմական տեխնիկայի գոյության մասին է վկայում Ֆերդինանդ Շոլանդոնը. նա նշում է, որ Հովհաննես Կոմնենոս կայսեր 1137 թ. արշավանքի ժամանակ, երբ բյուզանդական զորքերը պաշարում են

²⁹⁸ Մարի-Աննա Շեվալիե, էջ 62:

²⁹⁹ Խաչակիրները և հայերը, էջ 10-11: Լ. Տեր-Պետրոսյանը նշում է 8 խաչակրաց արշավանքներ՝ 1-ը 1096-1099, 2-րդը՝ 1147-1149, 3-րդը՝ 1189-1192, 4-րդը՝ 1204, 5-րդը՝ 1217-1221, 6-րդը՝ 1223-1229, 7-րդը՝ 1248-1254, 8-րդը՝ 1270 թթ.:

³⁰⁰ Ա. Սուքիասյան. էջ 174:

³⁰¹ Միսուան, էջ 487:

³⁰² Դատաստանագիրք, էջ 18:

³⁰³ Հայ ժող. պատմություն, էջ 754:

³⁰⁴ Տարեգիրք, էջ 243:

Անավարզա քաղաքը, այն «բացի պաշտպանության համար բնականից հարմար բարձր դիրքից, ապահովված էր նաև ամեն տեսակի պատերազմական մեքենաներով»³⁰⁵:

Կիլիկյան բանակի անբաժանելի մաս է կազմել նաև ռազմական նավատորմը, որի վերաբերյալ աղբյուրներում տեղեկությունները բավականին սակավ են: Կիլիկյան ռազմական նավերի մասին խոսում է Կիրակոս Գանձակեցին, նա ներկայացնում է մի ծովային ճակատամարտ, որը ղեկավարում էր Լևոն Բ թագավորը: Այդ ճակատամարտը տեղի է ունեցել Կիպրոսից վերադառնալիս, իսկ թվականի մասին մենք տեղեկություն չունենք. «*Եվ առ իւր նաւս պատերազմականս, և եկեալ ի դարանն, որ գործեալ էր նմա նաւաց բազմաց. և, զի ա՛յր իմաստուն էր ծանեաւ, թե յորում իցէ գլխաւորն, եհար զնա արագաթն նաւովն և ջրասոյգ արար զամենեսեանն, և մնացեալ նաւքն փախան*»³⁰⁶:

Ռազմական նավերի՝ դրանց ինչպիսի լինելու մասին մեզ հասած տեղեկությունները շատ քիչ են. ինչպես հայտնում է Կ. Գանձակեցին դրանք «արագաթն» էին³⁰⁷: Արաբ հեղինակ Իբն էլ-Վարդին, նկարագրելով 1323 թ. եգիպտական զորքերի կողմից Այասի պաշարումը, հաղորդում է, որ այս նավահանգստում հայերն ունեցել են 3 ռազմական նավեր, որոնք կոչվել են «Ատլաս», «Շամա» և «Այաս»³⁰⁸:

Բյուզանդական բանակի նավատորմի ղեկավարների անունները շատ հազվադեպ են հիշվում աղբյուրներում, որովհետև այդ մարդիկ իրենց պաշտոնին հասել են ամենացածր աստիճանից՝ նավաստուց (այսինքն՝ ազնվական ծագում չեն ունեցել և արքունի ֆեոդալների մեջ քիչ հարգանք են վայելել), չնայած նրան, որ եղել են դեպքեր, երբ կայսր են դարձել հասարակ զինվորից³⁰⁹: Մեր կարծիքով,

³⁰⁵ Խաչակիրները և հայերը, էջ 161:

³⁰⁶ Կիրակոս Գանձակեցի, էջ 160:

³⁰⁷ Նույն տեղում:

³⁰⁸ Ա. Տիրացյան, էջ 46:

³⁰⁹ История Византий, ст. 204.

հենց դա է պատճառը, որ նրանց մասին աղբյուրներում շատ քիչ ենք հանդիպում:
Նույն երևույթը մենք տեսնում ենք նաև կիլիկյան իրականության մեջ:

Ըստ Ա. Տիրացյանի՝ կիլիկյան ռազմանավերը չեն մասնակցել նվաճողական արշավանքներին³¹⁰, և մենք ենթադրում ենք, որ այդ ռազմական նավերը պաշտպանական գործունեություն են իրականացրել առևտրական նավերի համար: Միջերկրական ծովում միշտ էլ առևտրական նավերի համար խնդիր է եղել ծովահենությունը: Հնագույն ժամանակներից կիլիկյան ծովահենների մասին հիշվում է դեռևս Պոմպեոսի ն. Ք. 67 թ. արշավանքի ժամանակ³¹¹: Եվ հավանական է, որ Կիլիկիան իր ռազմական նավերն օգտագործել է հենց դրանց դեմ պայքարում:

³¹⁰ Ա. Տիրացյան, էջ 45:

³¹¹ Микаелян, ст. 32. Կ. Մուրաֆյան, էջ 204-208: Այդ ժամանակ Պոմպեոսն այրեց կիլիկյան ծովահենների շուրջ 1300 նավ:

Դատական համակարգը

Կիլիկիայի դատական ինստիտուտն իրենից ներկայացնում էր մի բարդ համակարգ: Նախ նշենք, որ երկրի իրավունքի աղբյուրները պետության գոյության ընթացքում փոփոխվել և հարմարեցվել են ժամանակի պահանջներին: Այս առիթով Ա. Սուքիասյանը նշում է, որ «Կիլիկիայում իրավունքի աղբյուրներ էին հանդիսանում սովորութական իրավունքը, մովսիսական օրենքները և Թալմուդը, Ասորա-հռոմեական դատաստանագիրքը, բյուզանդական օրենքները, Անտիոքի ասիզները, (Ա. Սուքիասյանը չգիտենք ինչու չի նշում Երուսաղեմի ասիզների մասին, որոնք նույնպես կիրառվել են Կիլիկիայում)³¹², թագավորի շնորհագրերն ու մյուս կարգադրությունները, օտար պետությունների ու ընկերությունների հետ կնքված պայմանագրերը, եկեղեցական կանոնները, Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը», Սսի 1243 թ. ժողովի կանոնադրությունը, Դավթի, Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերը»³¹³:

Կիլիկիան, լինելով ֆեոդալական մանր իշխանությունների երկիր, հիմնականում կառավարվում էր պետական վարչական օրգաններով և տեղական՝ գավառական դատարաններով³¹⁴:

Երկրում գուգահեռ գոյություն ունեին 2 կարգի՝ բարձրագույն (կենտրոնական) և ստորին (տեղական) դատական ատյաններ³¹⁵:

Բարձրագույն դատական ատյաններն էին՝ պետական, եկեղեցական, հայրենակալվածքային ատյանները: Իսկ ստորին ատյաններն էին՝ տեղական, համայնքային ատյանները³¹⁶:

³¹² Ա. Բոռնազյան, էջ 118:

³¹³ Սրանց մասին մանրամասն տե՛ս Ա. Սուքիասյանի նշված աշխատությունում, էջ 181-241, Ա. Թովմասյան, Հին և Միջնադարյան հայ քրեական իրավունք, Երևան, 1962, էջ 40-218:

³¹⁴ Ա. Սուքիասյան, էջ 176:

³¹⁵ Նույն տեղում, էջ 176-177:

³¹⁶ Նույն տեղում, էջ 179-180:

Տեղական կամ ստորին դատարաններն էին իշխանական ատյանները և քաղաքներում և նավահանգիստերում գործող բուրժեաները (այս բառը ծագում է գերմանական բուրգ և ֆրանսիական բուրժ բառից, որը թարգմանաբար նշանակում է քաղաք)³¹⁷:

Իշխանական դատարաններն էլ բաժանվում էին մարզային և շրջանային դատական ատյանների³¹⁸:

Պետական դատարանների կարգում էին դասվում՝ թագավորական վերին դարպասը, մեծ իշխանի և Սսի արքեպիսկոպոսական դատարանները, ինչպես նաև պետական ստորին՝ պայլի և դքսի դատարանները³¹⁹:

Այս բոլոր դատարաններն իրենց գործունեությունն իրականացնում էին դասային սկզբունքով, դրա հիման վրա հավասարները դատվում էին հավասարների կողմից, բայց վերադաս իշխանի հսկողության ներքո: Այդ է ապացուցում Սմբատ Սպարապետի հետևյալ հոդվածը. *«Եվ զիշխանքս դատե իշխանաց իշխանն՝ իշխանօք և իրենց տեսովն, նոյնպէս և զազատքն, որ են ի մերս ձիաւորքն և լիճ ճորտերն՝ նա իրենցովն զերենք դատեն իշխանաց իշխանքն.»*:

Վերին կամ Մեծ դարպասը ղեկավարում էր թագավորը, իսկ նրա բացակայության դեպքում դատական նիստերը ղեկավարում էր փոխարինողը³²⁰: Սմբատ Սպարապետը վկայում է, որ արքայի՝ դատական նիստերին բացակայելու դեպքում փոխարինում էր իշխանաց իշխանը³²¹: Այս դատարանում նաև բարոնների մասնակցությամբ քննվում էին թագավորի անձնական վասալների քաղաքացիական վեճերն ու քրեական հանցագործությունները³²². *«Ղթագաւորին ճորտերն՝ թագաւորին հրամանօք»*³²³:

³¹⁷ Ա. Սուքիասյան, էջ 178:

³¹⁸ Նույն տեղում:

³¹⁹ Նույն տեղում:

³²⁰ Նույն տեղում, էջ 176:

³²¹ Դատաստանագիրք, էջ 46:

³²² Նույն տեղում, էջ 35:

³²³ Նույն տեղում, էջ 47, Սիսուան էջ 480:

Մյուս դատարանների նկատմամբ այս դատարանը միաժամանակ բարձրագույն դատական ատյան էր, օրինակ՝ եթե մյուս դատարանները մահվան դատավճիռ էին կայացնում, ապա վերին դարպասը՝ որպես բարձրագույն դատական ատյան, իրավունք ուներ հաստատել կամ բեկանել տվյալ վճիռը³²⁴: Սմբատ Գունդատարի համաձայն՝ դատարանների կայացրած մահվան վճիռները վավերացնում և հաստատում էր միայն արքան³²⁵:

Մեծ իշխանի կամ իշխանաց իշխանի դատարանն անձամբ ղեկավարում էր մեծ իշխանը: Այս դատարանում հիմնականում քննվում էին մեծ և փոքր իշխանների միջև ծագած վեճերը, ինչպես նաև նրանց կողմից կատարված հանցագործությունները: Այս դատարանը մյուս ստորակարգ ատյանների նկատմամբ բարձրագույն ատյան էր: Նա իրավունք ուներ հաստատել կամ բեկանել այդ ատյանների կայացրած դատական վճիռները³²⁶:

Մյուս բարձրագույն դատարանը մայրաքաղաքի դատական ատյանն էր, որի ղեկավարը Սսի արքեպիսկոպոսն էր: Ինչպես գիտենք, նա ի պաշտոնե ղեկավարում էր նաև թագավորական ատենադպիրի պաշտոնը: Այս դատարանը քաղաքացիական դատարանների նկատմամբ բարձրագույն դատական ատյան էր, սակայն առաջին ատյանի դատարան էր համարվում օտարերկրացիների և հայերի միջև ծագած խոշոր քաղաքացիական վեճերը, ինչպես նաև օտարերկրացիների կատարած հանցագործությունները քննելիս³²⁷:

Ա. Սուրբիսայանը ենթադրում է, որ պայլի և դքսի դատարաններում քննվում էին հայերի և օտարերկրացիների միջև ծագած այնպիսի վեճեր, որոնք չէին մտնում բարձրագույն քաղաքացիական դատարանի, այսինքն՝ Սսի արքեպիսկոպոսական դատարանի իրավասության մեջ: Այս դատարանները

³²⁴ Ա. Սուրբիսայան, էջ 176:

³²⁵ Դատաստանագիրք, էջ 17, Մահապատժի մասին մանրամասն տե՛ս Ա. Թովմայան, էջ 496-517:

³²⁶ Ա. Սուրբիսայան, էջ 177, Սիսուան, էջ 480:

³²⁷ Նույն տեղում, էջ 177:

գործում էին խոշոր քաղաքներում, նավահանգիստներում. այնտեղ, որտեղ ապրում կամ առևտուր էին անում օտարերկրացիները³²⁸:

Պայլի դատարանը գործում էր մայրաքաղաքում ու նավահանգիստներում, և այն ղեկավարում էր կապիտանը, իսկ դուքսի դատարանը գործում էր առևտրական կետերում ու շուկաներում, որը վերահսկում ու դատում էր թերակշռման, թերաչափման և առևտրի կանոնների խախտման դեպքերը³²⁹: Մեր կարծիքով սա ավելի շատ ոստիկանական գործունեություն էր իրականացնում, քան դատական:

Ա. Սուքիասյանը նշում է, որ օտարերկրացիներին իրավունք էր տրվում որշ դեպքերում ունենալ իրենց սեփական դատարանները, իսկ քաղաքացիական գործերով իրավասության առավելությունը պատկանում էր Կիլիկյան պետական դատարաններին³³⁰:

Ինչպես նշեցինք, տեղական կամ ստորին պետական դատարանները բաժանվում էին իշխանական դատարանների և քաղաքային բուրջեանների: Սմբատ Սպարապետի հետևյալ տողերից պարզ է դառնում, որ իշխանական դատարանները գործում էին գավառներում, այսինքն ֆեոդալների անձնական տիրույթներում. *«հայնց լինի դատարանն ընդ իւրաքանչիւր պարոնայքն առհասարակ և ընդ իրեն ճորտերն»*³³¹: Այս դատարանները ղեկավարում էր տվյալ գավառի իշխանը կամ նրա օգնականը, իսկ նիստերին մասնակցում էին ֆեոդալները: Սրանք բաժանվում էին մարզային և շրջանային դատական ատյանների³³²:

Մարզային ատյաններում քննվում էին հիմնականում քրեական հանցագործությունները, իսկ շրջանային դատարաններում քաղաքացիական գործերը: Մարզային դատարանն առաջին ատյանն էր տվյալ

³²⁸ Ա. Սուքիասյան, էջ 178: :

³²⁹ Նույն տեղում, էջ 177:

³³⁰ Նույն տեղում, էջ 178:

³³¹ Դատաստանագիրք, էջ 19:

³³² Ա. Սուքիասյան, էջ 178:

գավառի ֆեոդալներին վերաբերող քաղաքային և քրեական գործերը քննելիս և երկրորդ աստյանի դատարան՝ շրջանային դատական աստյանների նկատմամբ³³³:

Տեղական դատարանների շարքում կարևոր տեղ էին գրավում քաղաքային դատարանները, որոնք Կիլիկիայում կոչվում էին բուրջեսներ: Բուրջեսի ղեկավարը և մյուս անդամներն ընտրվում էին քաղաքացիների կողմից, այստեղ քննվում էին քաղաքացիների միջև ծագած վեճերը, նրանց կատարած քրեական հանցագործությունները³³⁴: Քաղաքում ապրող ազնվականների գործերը քննվում էին, ինչպես արդեն նշեցինք իշխանական մարզային դատարաններում³³⁵:

Ինչ վերաբերում է գյուղացիներին, ապա նրանց դատելու իրավունք ունեին ֆեոդալական ամենացածր աստիճան ունեցող ազատները՝ ձիավորները³³⁶, սակայն գյուղացիներին մարմնական պատիժներ տալու կամ սպանելու վճիռներ կարող էր տալ միայն թագավորը և գավառի իշխանը³³⁷:

Կիլիկիայում, բացի աշխարհիկ դատարաններից, գոյություն ունեին նաև եկեղեցական դատարաններ: Այդ մասին են վկայում Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» հոգևոր բնույթի ինչպես նաև եկեղեցու, հոգևորականությանը վերաբերող մի շարք հոդվածները³³⁸:

Ըստ Ա. Սուքիասյանի՝ եկեղեցական դատարանների իրավագործությունը երկակի բնույթ էր կրում:

Առաջին՝ Եկեղեցին իրավունք ուներ բոլոր կարգերի մարդկանց դատելու՝ հավատքի ու բարոյականության դեմ ուղղված հանցագործության համար: Այս դատարաններում հիմնականում քննվող գործերը բնակչության կենցաղային

³³³ Ա. Սուքիասյան, էջ 178:

³³⁴ Նույն տեղում:

³³⁵ Նույն տեղում:

³³⁶ Ս. Բոռնազյան, էջ 129:

³³⁷ Ա. Սուքիասյան, 179:

³³⁸ Դատաստանագիրք, էջ 23, 25, 72:

բնույթի էին, հոգևորականների կատարած հանցագործություններ, թագավորին կամ իշխանին անպատեհ խոսք ասելու գործեր³³⁹:

Մենք համաձայն չենք Ա. Սուքիասյանի այն մտքի հետ, որ «Եպիսկոպոսի հանցագործության մեջ մեղադրվելու դեպքում այդ գործը քննվում էր ոչ թե Եկեղեցական դատարանում, այլ պարոնի ատյանում, որը համարվում էր բարձրագույն ատյան»³⁴⁰: Սրա վերաբերյալ ասենք, որ Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» 22 (իբ) և 23 (իգ) հոդվածների համաձայն Եպիսկոպոսի անօրենության դեպքում միայն Կաթողիկոսին կարող էին զանգասովել, այսինքն՝ Կաթողիկոսն էր դատում նրանց³⁴¹: Կիլիկիայում Կաթողիկոսն ուներ շատ մեծ իրավասություններ, օրինակ՝ արքային դատելիս նա էր գլխավորում դատող ատյանի խորհուրդը³⁴²:

Երկրորդ՝ Եկեղեցին, որպես հողատեր կառույց, նույապես դատական իրավունքն ուներ մյուս հողատեր ֆեոդալների նման: Եկեղեցական դատարանների թվում բարձրագույն դատական ատյան էր համարվում կաթողիկոսի ղեկավարած դատական նիստերը: Այդ դատարաններից ստորադաս էին գտնվում թեմերում գործող Եպիսկոպոսական դատարանները, իսկ վանքերում գոյություն ունեին վանական դատարաններ վանահայրերի ղեկավարությամբ: Դրանց մասին են վկայում Սմբատ Սպարապետի վանական օրենքները³⁴³:

Դատարանները, որպես կանոն, կոլեգիալ էին՝ կազմված նախագահից և երկու կամ ավելի ատենակալներից³⁴⁴: Գրեթե բոլոր աշխարհիկ դատարաններում մասնակցում էին երդվյալ ատենակալներ: Դատարաններում գոյություն ունեին

³³⁹ Դատաստանագրք, էջ 23, 29:

³⁴⁰ Ա. Սուքիասյան, էջ 179:

³⁴¹ Դատաստանագրք, էջ 24:

³⁴² Նույն տեղում, էջ 46:

³⁴³ Նույն տեղում, էջ 29-31:

³⁴⁴ Դատական գործընթացի մասին մանրամասն տե՛ս Մխիթար Գոշի մոտ, էջ 5-75:

նան նումիկուսներ կամ նոտարներ, որոնք կազմում էին դատական արձանագրությունները³⁴⁵:

Դատավարությունն անվճար էր, որովհետև այդ ծախսերը, ինչպես նաև աշխատավարձերը վճարվում էին տուգանքների հաշվին: Տուգանքների մասին են վկայում Սմբատի «Դատաստանագիրքը»³⁴⁶, «Անտիոքի Ասիզները»: Ըստ Ասիզների՝ եթե գողոնը հայտնաբերվել է դատարանի միջոցով, ապա դրա 1/3-ը պատկանում է դատարանին³⁴⁷: Դատի ժամանակ հրավիրվում էին վկաներ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ դատարաններում թերահավատ, ինչպես նաև մեկ մարդու վկայությունը չէր ընդունվում: Վկայությունը հավաստվում էր Ավետարանի վրա երդմամբ: Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի համաձայն՝ եկեղեցին պետք է երաշխավորեր վկայի ուղղամիտ անձնավորություն լինելու մասին, նոր դրանից հետո վկայությունը համարվեր վավերական³⁴⁸: Մխիթար Գոշը դատարաններում երդվելու իրավունքից ազատում էր անչափահասներին, ծերերին, հիվանդներին, ապաշխարողներին, կանանց արբեցողներին, մաքսավորներին, մեղավորներին և հոգևորականներին³⁴⁹:

Հարկ ենք համարում նշել, որ վերը նշված դատարաններից բացի՝ Կիլիկիայում գոյություն են ունեցել զինվորական դատարաններ: Այդ է վկայում Ներսես Լամբրոնացու կողմից թարգմանած և բանակում կիրառված «Զինվորաց օրենսգիրքը»: Մեր կարծիքով զինվորական դատարանը ղեկավարում էր սպարապետը, ինչպես օրենսգիրքն է ասում «*կոմս կամ տրիբուն*»-ը³⁵⁰: Մեր օրերում, երբեմն, տրիբունալ ասելով, նկատի ունենք միայն զինվորական դատարանը:

³⁴⁵ Ա. Սուքիասյան, էջ 178:

³⁴⁶ Դատաստանագիրք, էջ 60:

³⁴⁷ А. Поповян, ст. 362.

³⁴⁸ Դատաստանագիրք, էջ 23:

³⁴⁹ Այս մասին մանրամասն տե՛ս, Մխիթար Գոշի նշված աշխատությունում, էջ 168-180:

³⁵⁰ Ա. Բոզոյան, էջ 15:

Օրենսգրքի հոդվածներից պարզ է դառնում, որ այս դատարանը քննում էր միայն զինվորական գործեր՝ լինեին դրանք դասալքություն, հրամանի զանցառում, վախկոտության ցուցաբերում, պահակակետի ինքնակամ լքում ևն³⁵¹: Հարկ է նշել, որ օրենսգրքի հոդվածները բավականին խիստ էին, իսկ պատիժները տարբեր՝ սկսած աստիճանագրկումից մինչև մահապատիժ:

Այսպիսով, նշենք, որ Կիլիկիայի պետության իրավական համակարգը բավականին բարդ էր, ինչը նույնպես վկայում է հենց պետության կազմակերպվածության մակարդակի զարգացած լինելու մասին:

³⁵¹ Գ. Հակոբյան, Ներսես Լամբրոնացի, Երևան, 1971, էջ 324-326:

Վերջաբան

«Կիլիկիայի հայկական պետության պետական կարգը» աշխատանքին ձեռնամուխ լինելով՝ մեր առջև խնդիր դրեցինք՝ ուսումնասիրելու պատմության այն ժամանակահատվածը, երբ ծաղկում էր կիլիկյան պետությունն իր պետականությամբ հանդերձ: Մի պետականություն, որը չէր ստեղծվել ամայի մի ինչ-որ տարածության վրա, այլ օտարներով լի քաղաքներում ու գյուղերում: Սա հայերի միասնականության, դիվանագիտության մեջ ճկուն լինելու արդյունք էր, որն ապացուցում է, որ հայ ժողովուրդը, շինարար լինելով հանդերձ, կարող էր ոչ միայն եկեղեցիներ, դղյակներ, ամրոցներ կառուցել, այլ նաև օտարության մեջ՝ պետություն:

Այդ պետության պետական բարձրագույն մարմինները կուրորեն չեն ընդօրինակել բուն կիլիկյան կամ եվրոպական ֆեոդալական համակարգի բարքերը, այլ որ հայ իշխանները և ժողովուրդը բուն Հայաստանից իրենց հետ Կիլիկիա են բերել Արշակունյաց և Բագրատունյաց ժամանակշրջանի բարքերն ու սովորությունները, ինչը միախառնելով տեղի ավանդությանը, ստեղծել են նորը, այսինքն՝ մի ուրույն, միայն հայերին բնորոշ իշխանական և թագավորական պետական համակարգ:

Կիլիկիայում հայկական պետական համակարգի պաշտոնների՝ գործակալությունների անունները մասամբ ընդօրինակված են եվրոպական երկրների պաշտոններից, սակայն բովանդակությամբ այդ գործակալությունները նման են Բագրատունյաց ֆեոդալական հարստության պետական համակարգին, այսինքն՝ սրանք նույնպես նման չեն եվրոպական երկրների պետական համակարգում նույն անվանումներն ունեցող գործակալություններին ու պաշտոններին, այլ տիպիկ հայկական են, որոնց նմանը չի հանդիպում ուրիշ երկրների պետական համակարգերում:

Բանակը նույնպես հայացված է, և որ կարևոր է, Կիլիկիայի հայկական պետությունն ունեցել է ուժեղ նավատորմ, բայց դրանով կատարել է ոչ թե հարձակողական արշավանքներ, այլ պաշտպանել է պետության սահմանները ծովից և առևտրական նավերը ծովահենությունից:

Կիլիկիայի իրավական տերմինները, դատավարության ձևը, վերջապես, կիրառված օրենքները հիմնականում հայացվել և հարմարեցվել են հայկական ավանդույթին:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Կիլիկիայի ֆեոդալական պետության պետական համակարգը, բանակը, իրավական դաշտը բավականին բարդ ու համակարգված կառույցներ են, ինչն ինքնին վկայում է Կիլիկիայի՝ կազմակերպված և զարգացած հայկական պետություն լինելու մասին:

ՑԱՆԿ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Սկզբնաղբյուրներ

1. Սամուել քահանայի Անեցոյ, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893:
2. Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961:
3. Մխիթար Գոշ, Դատաստանագիրք Հայոց, աշխատասիրութեամբ Վահան ծ. վարդապետ Բաստամյանցի, ի Վաղարշապատ, 1880:
4. Ներսիսի Լամբրոնացոյ թուղթ առ Քրիստոսագոր իշխողն մեր Լևոն ի նուաստ Ներսէսէ, որ ի Տարսն սրբոյ եկեղեցոյ պաշտոնեայ, Վենետիկ, 1865:
5. Թուղթ ընդհանրական արարեալ երիցս երանեալ սուրբ Հայրապետին մերոյ տեառն Ներսիսի Շնորհալոյ, Ս. Էջմիածին, 1865:
6. Տարեգիրք արարեալ Սմբատ Սպարապետի Հայոց որդւոյ Կոստանդեայ կոմսին Կոռիկոսոյ, Փարիզ, 1859:
7. Սմբատ Սպարապետի Դատաստանագիրք, աշխատասիրությամբ Արսէն Վարդապետ Ղլտճեանի, Էջմիածին, 1918:
8. Սմբատ Սպարապետի Տարեգիրք, ի Վենետիկ, Ս. Ղազար, 1956:
9. Մատթեոս Ուռհայեցոյ ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898:

Ուսումնասիրություններ և հոդվածներ

1. Ալիշան Ղևոնդ, Սիսուան, Վենետիկ, 1885:
2. Ալիշան Ղևոնդ,- Ի. Հ. Ղևոնդէ Մ. Ալիշան, Հուշիկք Հայրենեաց Հայոց, Հատոր Ա, Ի Ս. Ղազար Վենետկոյ, 1889:
3. Բարթիկյան Հ., Նոր նյութեր Կիլիկիայի հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին, «Բանբեր Մատենադարանի», Երևան, N 4, 1958:
4. Բարթիկյան Հ., Հայ Բյուզանդական հետազոտություններ, Երևան, 2002:
5. Բոզոյան Ա., Ներսես Լամբրոնացու «Զինվորաց օրենսգրքի» համեմատական բնագիր: Անտիպ:
6. Բոռնազյան Ս., Սոցիալ տնտեսական հարաբերությունները Կիլիկիայի հայկական պետությունում 11-12 դդ, Երևան, 1973:
7. Գալստյան Ա., Սմբատ Սպարապետ, Երևան, 1961:
8. Գալստյան Ա., Հայ ասպետության հարցի շուրջը, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1968:
9. Եղիայեան Բ., Կիլիկիոյ Հայոց թագաւորութեան երեք դարերը (1070-1375), Երեւան, 1994:
10. Թովմասյան Ա., Հին և Միջնադարյան հայ քրեական իրավունք, Երևան, 1962:
11. Հակոբյան Ս., Հայ գյուղացիության պատմություն, Երևան, 1957:
12. Հակոբյան Գ., Ներսես Լամբրոնացի, Երևան, 1971:
13. Մանանդյան Հ., Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Երևան, 1954:
14. Մութաֆյան Կ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2001:

15. **Սուքիասյան Ա.**, Կիլիկիայի հայկական պետության և իսլամի պատմություն, Երևան, 1978:
16. **Շեվալիե Մարի-Աննա**, Կրոնա-ասպետական միաբանությունների ընկալումը՝ Արևելքի քրիստոնյաների (հայերի և ասորիների) կողմից XII դ. սկիզբ- XIV դ. սկիզբ, «Նիկողայոս Մառ», Երևան, 2005:
17. **Տեր-Պետրոսյան Լ.**, Խաչակիրները և Հայերը, Հատ. Ա, Երևան, 2005:
18. **Տիրացյան Ա.**, Կիլիկիայի հայկական պետության սեփական նավատորմի ունենալու հարցի շուրջը, «Էջմիածին», N 9, 1957:
19. Հայ ժողովրդի պատմություն, Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի հրատ., հատ. III, Երևան, 1976:
20. Նոր Բաղդիրք Հայկազեան Լեզուի, Հատ. Բ, Երևանի Համալսարանի հրատ., Երևան, 1981:

Օտարալեզու գրականություն

1. **Дюби Ж.**, Средние века (987-1460), от Гуго Капета до Жанны д'Арк. Москва, 2001.
2. **Еремян С.**, Опыт периодизации истории Армений эпохе Феодализма «Вопросы историй», N7, 1951.
3. История Византий, Том 2, 3, Москва, 1967.
4. **Микаелян Г.**, История Киликийского Армянского государства, Ереван 1952.
5. **Поповян А.**, Ассизы Антиохийские, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1956.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	2
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	
1. Կիլիկիան սկզբից մինչև XI դար.....	7
2. Կիլիկիայի հայկական պետությունը XI-XIV դդ.....	10
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	
1. Կիլիկիայի հայկական պետության պետական կարգը XI-XII դդ.....	15
2. Կիլիկիայի պետական կարգը թագավորության շրջանում.....	23
ԳԼՈՒԽ ԵՐԸՈՐԴ	
1. Գործակալությունները.....	30
• Թագադիր գործակալություն.....	35
• Սպարապետություն.....	37
• Պայլություն.....	39
• Արքունի քարտուղարություն.....	40
• Սեղանապետություն.....	43
• Մաքսապետություն.....	46
• Արքունիքում գործող պաշտոնները.....	48
• Ինքնակառավարման մարմինները	54
2. Բանակը.....	58
3. Դատական համակարգը.....	65
Վերջաբան.....	73
Ցանկ օգտագործված գրականության.....	75